

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սխալեցաւ Արդեօփ Ռուսաստանի Նախագահը

Ռուսական բանակը սկսաւ իր լայնածաւալ ռազմական գործողութիւնները Ուքրանիոյ դէմ: Շատ-շատեր անակնկալի եկան նախագահ Վլատիմիր Փութինի այս քայլով, խորհելով թէ Միացեալ Նահանգներն է որ, պատերազմի մասին անդադար ահազանգ հնչեցնելով կը սրէր իրավիճակը, իսկ Մոսկուա պարզապէս կը փորձէր զիջումներ ձեռք ձգել Արեւմուտքէն ու կանխել Ուքրանիոյ մուտքը ՆԱՌԾ-ի ռազմական դաշինքէն ներս: Սակայն, Սպիտակ Տան կանխատեսումները այս անգամ ճիշդ դուրս եկան ու Եւրոպայի սրտին մէջ բռնկեցաւ նոր պատերազմ:

Նախ պէտք է արձանագրել որ, յարձակման իրահանգը արձակելու պահուն Փութինի տուած պատճառաբանութիւնները համոզիչ չէին: Ուքրանիան անմիջական վտանգ չէր ներկայացնէր Ռուսաստանի համար եւ ո՛չ ալ այդ երկիրը կը ղեկավարուի նէյո-նացիստներով ու թմրամոլներով:

Պատերազմական գործողութիւններու սկսելէն շաբաթ մը ետք, Ռուսական բանակը տակաւին չէ կարողացած չէզոքացնել անհամեմատ աւելի տկար Ուքրանական բանակը եւ ոչ ալ կարողացած է գրաւել մայրաքաղաքը, հոն հաստատելու համար Մոսկուայի բարեկամ կառավարութիւն: Անպատասխան մնաց նաեւ Փութինի կոչը ուղղուած Ուքրանական բնակիչն ստանձնելու իշխանութիւնը: Յառաջիկայ օրերուն եւ կամ շաբաթներուն այդ նպատակները կրնան իրականանալ, սակայն ի գին մեծ թիւով զոհերու: Նոյնիսկ այդ պարագային երաշխաւորուած չէ որ, Մոսկուա պիտի կարողանայ Ուքրանիան ենթարկել իրեն: Երկիր գրաւելը մէկ բան է, զայն վերահսկելը մէկ այլ բան, ինչպէս ցոյց տուին Իրաքի եւ Աֆղանիստանի պատերազմները: Երկու տեղերուն մէջ ալ, սկզբնական շրջանին Ամերիկեան զօրքերը դիմաւորուեցան ծաղիկներով, սակայն հետագային դարձան թիրախ յարձակումներու: Ուքրանիոյ պարագային կը թուի թէ Ռուսական զօրքերուն ծաղիկներով դիմաւորողներ շատ չկան, ընդհակառակը կամաւորական ջոկատներ կը պատրաստուին պաշտպանելու իրենք երկիրը:

Փութինի սկսած պատերազմը Ռուսաստանը ենթարկեց միջազգային աննախադէպ պատժամիջոցներու, արագօրէն ազդելով տնտեսութեան բազմաթիւ ճիւղերուն վրայ:

Շար.ը էջ 6

«Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդը Պէտք Զէ Խտրականութեան Ենթարկուի»: Արարատ Միրզոյեան



Արարատ Միրզոյեան ելոյթ կ'ունենայ ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի նստաշրջանին առջեւ

«Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդը պէտք չէ Խտրականութեան ենթարկուի իր ծագման, լեզուի, կրօնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային ծագման կամ այլ պատճառներով», Ժընեւի մէջ ՄԱԿ-ի Մարդու Իրաւունքներու Խորհուրդի 49-րդ նստաշրջանի բարձրաստիճան նիստին ընթացքին յայտարարած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Միրզոյեան նշած է, որ ՄԱԿ-ը եւ անոր մարմինները օժտուած են համընդհանուր մանտաթով՝ անվերապահ, անխոչընդոտ, անարգել հասանելիութիւն ունենալու կարիքի մէջ գտնուող մարդոց՝ անտանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Շար.ը էջ 5

Նիկոլ Փաշինեանն Ու Ալէն Սիմոնեանը Յարգանքի Տուրք Մատուցեցին Մարտ 1-ի Զոհերու Յիշատակին



Նիկոլ Փաշինեան եւ Ալէն Սիմոնեան յարգանքի տուրք կը մատուցեն Միասնիկեանի արձանին մօտ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ ՀՀ նախագահի լիազօրութիւնները կատարող Ալէն Սիմոնեան յարգանքի տուրք մատուցեցին 2008 թուականի Մարտ 1-ին Երեւանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն հետեւանքով զոհուածներու յիշատակին:

2008 թուականի Մարտ 1-ի վաղ առաւօտեան ոստիկանները յարձակեցան Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ գիշերող

ընդդիմադիր ցուցարարներուն վրայ, որոնք իրենց բողոքը կը յայտնէին նախագահական ընտրութիւններու պաշտօնական արդիւնքներուն դէմ:

Նոյն օրը, աւելի ուշ, Ալեքսանտր Միսանիկեանի արձանին յարող հրապարակին վրայ եւ անոր մերձակայքին, ուժայիններուն կողմէ սպաննուեցան տասը մարդիկ, վիրաւորուեցան հարիւրաւորեր:

Շար.ը էջ 5

Հայաստան-Թուրքիա Բանազնացնելու Երկրորդ Հանդիպումը

Վիեննայի մէջ տեղի ունեցած է Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի յատուկ ներկայացուցիչներ՝ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահի տեղակալ Ռուբէն Ռուբինեանի եւ դեսպան Սերտար Քըլըճի երկրորդ հանդիպումը:

Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան փոխանցմամբ, յատուկ ներկայացուցիչները վերահաստատած են, որ բանակցութիւններու վերջնական նպատակը Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ լիարժէք կարգաւորումն է, ինչպէս պայմանաւորուած էին Մոսկուայի մէջ իրենց առաջին հանդիպման ընթացքին:

«Նրանք մտքեր են փոխանակել այդ կապակցութեամբ համատեղ հնարաւոր ճշգրիտ քայլեր ձեռնարկելու շուրջ եւ վերահաստատել իրենց համաձայնութիւնը՝ գործընթացը շարունակելու առանց

Շար.ը էջ 4

Սօս Մէկ Տասնեակ Ռուսաստանեան Ընկերութիւններ Տեղափոխուած Են Հայաստան

Ռուս-ուքրանական պատերազմին պատճառով բազմաթիւ ռուսաստանեան ընկերութիւններ վերջին օրերուն կը փափաքին Հայաստան տեղափոխուիլ՝ գործը այնտեղ շարունակելու: Տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանի համաձայն, անոնցմէ շուրջ մէկ տասնեակը արդէն Հայաստան է: Դիմած են բազմաթիւ ընկերութիւններ, տասնեակ եւ հարիւրաւոր ընկերութիւններ:

Գործող առեւտրային արհեստը Հայաստան տեղափոխող կամ տեղափոխիլ պատրաստուող ընկերութիւններուն մեծ մասը, ըստ տնտեսութեան նախարարին, բարձր արհեստագիտական ոլորտէն է: Քերոբեանի փոխանցմամբ, այստեղ եկած են կամ գալու կը պատրաստուին մասնաւորապէս արեւմտեան շուկաներու հետ աշխատող ընկերութիւնները: «Հիմնականում այն ընկերութիւններն են, որքեր ունեն ուղիղ առնչութիւն արեւմտեան շուկաների հետ, եւ այսօրուայ սահմանափակումները թոյլ չեն տալիս, որպէսզի իրենք իրենց երկրից այդ աշխատանքը կատարեն»:

Շար.ը էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սպասուում են «Ցաւոտ Ձիջումներ»

ԱՐԱՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Իրավիճակը Ուկրաինայի շուրջ այնքան արագ է փոխուում, որ դժուար է որեւէ բան ոչ միայն կանխատեսել, այլև՝ վերջնականապէս արձանագրել: Իմ տպաւորութեամբ՝ Փութինի ծրագրերի մէջ է մտնում գրաւել Քրիւք եւ այնտեղ հաստատել ռուսամէտ իշխանութիւն: ՌԴ նախագահի ակնարկներն այն մասին, որ Ուկրաինայում զինուորականները իշխանութիւնը պէտք է խլեն «թմրամոլների աւագակախմբից» (այդպիսի «յարգալից» վերաբերմունք ունի մի պետութեան ղեկավարը մէկ այլ պետութեան ղեկավարութեան հանդէպ), խօսում է յօգուտ այդ վարկածի: Կրեմլը, հաւանաբար, նաեւ ակնկալում է, որ պարտուած Ուկրաինան կը ճանաչի Ղրիմը, ինչպէս նաեւ Դոնեցկի եւ Լուգանսկի մարզերը՝ որպէս Ռուսաստանի անբաժանելի մաս, ինչպէս նաեւ կը յայտարարի երկրի չէզոք կարգավիճակի մասին: Վերջին հարցում Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, կարծես թէ, «հասունացել» է: Կարծում եմ, հասկանալի է. որքան ուշ Զելենսկին գնայ «ցաւոտ գիշումների», այնքան դրանք աւելի «ցաւոտ» կը լինեն:

Յիշեցնեմ, որ 44-օրեայ պատերազմում Ռուսաստանի նպատակն էր Արցախում իր զինուորական ներկայութիւնն ապահովելը, որը լուրջ լծակ է Ատրպէյճանի դէպքում եւ վերջնականապէս կապում է Հայաստանի ձեռքերը: Փաշինեանը սկզբից դիմադրում էր այդ ծրագրին, բայց յետոյ, երբ գործերը ռազմաճակատում կտրուկ

վատթարացան, համաձայնեց: Դիւետանտիզմի եւ սխալ հաշուարկների առումով Հայաստանի եւ Ուկրաինայի ներկայիս ղեկավարներն իսկապէս իրար նման են:

Հայաստանում շատերն են այսօր խօսում այն մասին, որ ուկրաինական բանակը չի դիմադրում Ռուսաստանի ներխուժմանը: Չեմ կարծում, որ մենք, այստեղ նստած եւ ռազմական փորձագէտներ չլինելով, կարող ենք կտրուկ դատողութիւններ անել այս առիթով: Միանշանակ է, որ ռուսաստանեան քարոզչութիւնն ուզում է հենց այդպիսի տպաւորութիւն ստեղծել՝ իբր սա ներխուժում չէ, այլ ազատագրում, եւ Ուկրաինայի բնակչութիւնն ամենեւին դէմ չէ, որ իրենց հողում օտարերկրեայ զինծառայողներ լինեն: Կրկին վրայակոչեմ Փութինին, որն ասում է, թէ ուկրաինական կողմից կուռում է ոչ թէ կանոնաւոր բանակը, այլ «նեոնացիստներն» ու «բենդերականները» (ինձ թւում է, այս երկուսը գոտ քարոզչական պիտակներ են, որոնք իրական բովանդակութիւն չունեն): Առայժմ ռուսաստանեան ղառային հեռուստալիքներով չեն հեռարձակում կադրեր, որոնք պատկերում են ռուսական տանկերը ծաղիկներով դիմաւորող ուկրաինացիներին, բայց ամէն ինչ դեռ առջեւում է: Եւ վերջում՝ չարախնդալու մասին: Գուցէ «բարձր քաղաքականութեան» տեսանկիւնից ճիշտ է ասել՝ «բա որ մենք նեղութեան մէջ էինք, ինչո՞ւ էիք դուք սատարում մեր հակառակորդին»: Բայց գոտ մարդկային առումով նման տրամաբանութիւնը, կարծում եմ, խոցելի է:

«ԱՌԱՒՕՏ»

Եւրոպական Սուվերենութեան Ֆրանսական Հոգսն Ու Հայաստանը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ֆրանս Պրես գործակալութիւնը յայտնել է, որ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը մտադիր է հանդիպել Գերմանիայի կանցլեր Շոլցի ու Եւրալիանախորհրդի նախագահ Ֆոն Դեր Լայենի հետ: Ըստ հաղորդագրութեան, կը քննարկուի ու քրանական իրավիճակը, ինչպէս նաեւ «Եւրոպական սուվերենութեան» թեման: Այդ մատնանշումը բաւականին հետաքրքիր է ու յատկանշական: Ֆրանսայի նախագահ Մաքրոնը բաւականին տեսական ջանք գործադրեց Ուկրաինայի շուրջ հասունացող եւ անխուսափելի դարձող պատերազմը կանգնեցնելու, կանխելու համար, այդ թւում բանակցելով Մոսկուա-Քիեւ, նաեւ Ուաշինկթոն-Մոսկուա «հաղորդուղով»: Մաքրոնի ջանքը սակայն չտուեց արդիւնք եւ այժմ Եւրոպայի կեդրոնում ծաւալուած է պատերազմ, որն ունի մեծանալու բոլոր «հնարաւորութիւնները»:

Ֆրանսայի նախագահը օրերս յայտարարեց, որ պէտք է պատրաստուել երկարատեւ ճգնաժամի, պատերազմի երկարատեւ հետեւանքի: Իսկ պատերազմի մի հետեւանք արդէն իսկ առկայ է: ԽՍՀՄ փլուզումից յետոյ նոր իրավիճակում աստիճանաբար ինքնիշխանութեան նշաններ ցոյց տուող Եւրոպան այժմ յայտնուել է ԱՄՆ ամբողջական գերակայութեան ներքոյ, որովհետեւ կայ ռուսական ահռելի սպառնալիք եւ այդ սպառնալիքի հակազդեցութեան իմաստով Եւրոպան չունի բաւարար ուժ եւ կարող է բախուել ինդիւրների, եթէ չստանայ ԱՄՆ աջակցութիւնը: Իսկ այդ աջակցութիւնը բնականաբար ունի քաղաքական գին: Այդ ինդիւրը յատկապէս ցաւոտ է Ֆրանսայի ու Գերմանիայի համար, հաշուի առնելով, որ այդ երկրներն են Եւրամիութեան առաջատարները եւ խոշոր հաշուով նրանց վրայ է կառուցուած Եւրոպական սուվերենութիւնը, ու միաժամանակ նրանք կարող են աշխարհաքաղաքական էական գործօն կամ դերակատար լինել այդ սուվերենութեամբ: Եթէ այն չկայ, կը նշանակի էապէս նուազում է նաեւ այդ դերակատարութեան հնարաւորութիւնը: Այս հարցի առումով էապէս զգայուն է Ֆրանսան,

գութեան միջազգային երաշխիքների: Ու պատկերացրէք՝ այս իրավիճակում Հայաստանի քաղաքական շրջանակներից տեսակէտներ են հնչում, թէ պէտք է օգտուել յարմար պահից ու սկզբի համար կասեցնել հայ-թուրքական երկխօսութիւնը: Հասկանալի է, չէ՞, Ռուսաստանին ուղղուած մեսիջի բովանդակութիւնը. «Յարգելի Ռուսաստան, եթէ Արեւմուտքը ձեր դէմ որպէս գործիք Ուկրաինային է օգտագործում, դուք էլ մեզ օգտագործէք թուրքիայի ու Ատրպէյճանի դէմ, չէ՞ որ նրանք ձեր թշնամիներն են: Էլ ուրիշ ինչպէ՞ս պիտի Ատրպէյճանին ստիպէք մտնել միութեանական պետութեան կազմի մէջ, եթէ ոչ մեր միջոցով»: Այս «տեսլականի» համաձայն՝ Ռուսաստանը պիտի մեզ գէնք-գինամթերք տայ, հեան էլ մի քանի

որտեղ առաջիկայում նախագահի ընտրութիւն է եւ չի բացառուում, որ Մաքրոնի մրցակիցները փորձեն օգտագործել այդ հանգամանքը նրա դէմ, առաջ բերելով նրա համար խնդիրներ: Ահա այս համատեքստում յատկանշական է «Եւրոպական սուվերենութեան» թեման քննարկելու Մաքրոնի մտադրութիւնը: Ընդ որում, նկատելի է նաեւ, որ Ֆրանսայի նախագահն այսօր էլ գործադրում է իրավիճակի հանդարտեցման ակտիւ ջանք: Նախօրէին նա հեռախօսազրոյց էր ունեցել Պելաուսի նախագահ Լուկաշենկոյի հետ:

Ֆրանսայի այս համգամանքը ուշադրութեան է արժանի նաեւ Հայաստանից, հաշուի առնելով թէ հայ-ֆրանսական առանձնաշատուկ յարաբերութիւնը, թէ պատերազմից բխող ռազմա-քաղաքական ու տնտեսական ռիսկերը նաեւ Հայաստանի համար: Ֆրանսայի նախագահի յաջողութիւնն այդ առումով կարեւոր կարող է լինել նաեւ Հայաստանի համար, միեւնոյն ժամանակ Ֆրանսայի այդ շահագրգռութիւնը կարող է նպաստել այն հանգամանքին, որ որոշակի իրողութիւնների բերումով Հայաստանի առաջ կը բացուի «Եւրոպական սուվերենութեամբ» մտահոգ Ֆրանսայի եւ Արեւմուտքի կոշտ պատժամիջոցների տակ յայտնուող Ռուսաստանի որոշակի շփումների «պահանջարկի» հեռանկար: Այդ առնչութեամբ թերեւս արժէ հետախուզել Փարիզի եւ Մոսկուայի ուղղութեամբ տրամադրուածութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Առաջ՝ Դէպի Հերթական Փոցխը

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ո՞ւմ կողմն է, ի վերջոյ, մեր համակրանքը Ուկրաինայում ընթացող պատերազմում: Խօսքը սոցիալքերում կամ այլ հարթակներում ընթացող էմոցիոնալ լեզուակռուի մասին չէ: Այդ մակարդակի վրայ Փութինին «Պուտլեր» եւ Զելենսկուն «ծաղրածու» անուանողների թիւը մօտաւորապէս նոյնն է: Ընդ որում՝ եթէ այս պատերազմի նպատակը լինէր Ուկրաինան բռնութեամբ ռուսական կայսրութիւն խցկելը, մեր համակրանքը երեւի միանշանակ կը լինէր իր ազատութեան համար պայքարող Ուկրաինայի կողմը, որովհետեւ Հայաստանը նոյնպէս անկախ պետութիւն է եւ չէր ցանկանայ յայտնուել օտար կայսրութեան կազմում, այն էլ՝ բռնութեամբ:

Բայց այս պատերազմն Ուկրաինայի համար չէ: Սա պատերազմ է ոչ թէ յանուն Ուկրաինայի, այլ Ուկրաինայի միջոցով: Կողմերից մէկը Ռուսաստանն է, միւսը՝ ՆԱՏՕ-ն, կամ, ինչպէս ընդունուած է անուանել աւելի մեղմ, «կոնսոլիդացուած Արեւմուտքը»: Իսկ Ուկրաինան ընդամէնը գոհ է: Զոհ, որը ստիպուած է շատ ծանր գին վճարել յետամնաց կայսրութիւնից դուրս պրծնելու եւ արեւմտեան քաղաքակրթութեանը մաս կազմելու համար: Իսկ ո՞վ էր ստում, որ դա ձրի է լինելու: Ուզում են դառնալ Եւրոպա եւ ունենալ, ասենք, Աւստրիայի կամ Չեխիայի

մակարդակի տնտեսութիւն ու բարեկեցութիւն՝ բարի եղիր վճարել դրա համար ու հնարաւորինս թուլացնել «Չարիքի կայսրութիւնը», չեն ուզում՝ հետեւի Պելաուսի օրինակին ու դարձիւր Ռուսաստանի ազրարային ծայրագաւառ, ռուսերէն՝ «օկրաինա»: Ուկրաինան կատարեց իր ընտրութիւնը, եւ ինչ էլք էլ ունենա՞մ պատերազմը՝ ակնյայտ է, որ յամենայն դէպս Դնեպր գետից արեւմուտք ռուսներին դիմաւորելու են ոչ թէ կարմիր դրօշներով, այլ Մոլոտովի կոկտեյլներով: Պելաուսն, ի դէպ, նոյնպէս կատարեց իր ընտրութիւնը, երբ թոյլ տուեց, որ իրեն օգտագործեն որպէս գործիք: Այն պահից, երբ ռուսական զօրքը Պելաուսի տարածքից մտաւ Ուկրաինա, ակնյայտ դարձաւ, որ Լուկաշենկոն հենց իր երկրի մասին էր ասում «Իսկ ո՞ւր պիտի փախչենք» ու նախապէս էր որոշել «օրհնել էն սհաթը»:

Այս իրավիճակում ամենաբարձր, առանց չափազանցութեան, Հայաստանի վիճակն է: Որովհետեւ ոչ Ռուսաստանին աջակցելն է մի բան, ոչ «կոնսոլիդացուած Արեւմուտքին», չէզոք մնալ էլ թոյլ չեն տայ: Չէզոքութիւն պահպանել գուցէ եւ յաջողուէր, եթէ հասցրած լինէինք կարգաւորել հայ-ատրպէյճանական եւ հայ-թուրքական յարաբերութիւնները, բայց փաստն այն է, որ չենք հասցրել, այսինքն՝ գտնուում ենք փաստացի պատերազմական վիճակում, լրակատար շրջափակման մէջ եւ առանց անվտանգ



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Երկրի Անկախութիւնը Սակարկութեան Պէտք Չէ Դնել. Քաղաքագետներ

Որեւէ վերագրւած ինքնիշխան կազմակերպութեան անդամակցութիւնը, եթէ պիտի բերէ Հայաստանի որպէս միջազգային իրաւունքի միաւոր գոյութեան դադարեցման, անոր պէտք է դիմադրել մինչեւ վերջ, ըսաւ քաղաքագէտ Բենիամին Պօղոսեան՝ անդրադառնալով հարցին, թէ ինչ պէտք է ընել, եթէ Ռուսաստանը պարտադրէ անդամագրուել Միութեան պետութեան:

Որեւէ պետութիւն պէտք է նուազագոյն ինչ-որ կարմիր գիծ ունենայ, ըսաւ քաղաքագէտը՝ նկատելով, որ «առանց այդ էլ Արցախում կարելի է սակայն բոլոր կարմիր գծերից հրաժարուել»:

«Այսինքն՝ պաշտօնական առումով, եթէ մենք այլեւս չենք լինելու ՄԱԿ-ի անդամ, չենք լինելու միջազգային կազմակերպութիւնների անդամ, լաւ աւելի պարզ սասնել, եթէ դառնալու ենք մտաւորապէս այնպիսի միաւոր, ինչպիսին թաթարստանի Հանրապետութիւնն է ներկայիս Ռուսաստանի Դաշնութեան կազմում, ապա, իմ խորին համոզմամբ, դա այն կարմիր գիծն է, որը հատել պէտք է ինչպէս որեւէ դէպքում», ըսաւ

Պօղոսեան:

Քաղաքագէտ Ստեփան Գրիգորեան համաձայնեցաւ, որ անկախութիւնը սակարկութեան պէտք չէ դնել:

«Ասենք՝ Ռուսաստանն ասում է՝ «հայեր, ես ճանաչում եմ Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը, եկէք մի քիչ մեզ աջակցեք»: Գիտէք, այդ դէպքում ես կը սկսէի քննարկել: Այսինքն՝ Ռուսաստանը կողմնորոշուեց, համարում է, որ Լեռնային Ղարաբաղին պէտք է տալ անկախութիւն, ոնց Ռուսաստանը տուեց Տոնեցքին, Լուկանսքին, որոնք ընդհանրապէս հիմքեր չունէին, մենք հիմքեր ունենք, եթէ տալ Ռուսաստանը, այո՛, անկախութիւնից չենք հրաժարուում, բայց այնուամենայնիւ սկսէինք ինչ-որ քննարկել: Բայց Ռուսաստանը ոչ մի բան չի տալիս, աւելին՝ ես տեսնում եմ, որ իրենք համարում են, որ մենք գործօն չենք, աւելի շատ սակարկում են Ատրպէյճանի հետ Ղարաբաղի հարցով, ուրեմն ոչ մի հետաքրքրութիւն մենք չունենք», ըսաւ քաղաքագէտը՝ շեշտելով, որ դիմադրելու համար ներքին քաղաքական ուժերու համախմբումն է հարկաւոր:


Հնարաւոր է Որ Յառաջիկային Ռուսաստանի Մէջ Այլեւս Չկարենան Վճարել Ոչ-քաղաքացի Աշխատողներուն

Ռուսաստանի մէջ ոչ-քաղաքացի աշխատողները արդէն լուրջ խնդիրներու բխած են, յառաջիկային ընդհանրապէս աշխատատեղի խնդիր պիտի ըլլայ այդ երկրին մէջ: Նման դիտարկում կատարեց «Հայկական Քարիթաս» բարեսիրական հասարակական կազմակերպութեան աշխատանքային գաղթի ծրագրի փորձագէտ Տաթև Լիկ Բեժանեանը:

«Արդէն իսկ ոչ մի լաւ գարգացում չկայ, նրանց գնորդականութիւնն առնուազն կիսով չափ կը ճատուէ: Հնարաւոր է՝ յառաջիկայում Ռուսաստանում այլեւս չկարողանան վճարել ոչ-քաղաքացի աշխատողներին: Նրանց, ովքեր պատրաստուած են մեկնել ՌԴ, ես խորհուրդ եմ տալիս դեռեւս ձեռնպահ մնալ: Իսկ ովքեր այնտեղ են, երեւի պէտք է մտածեն Հայաստան գալու մասին, որովհետեւ չի բացառուում, որ որոշ ժամանակ անց իրենց արդէն չկարողանան վճարել», ըսաւ Բեժանեանը:

Նշենք, որ Կեդրոնական դրամատան հրապարակած վիճակագրութեան համաձայն՝ ֆիզիքական անձերու անունով ՀՀ դրամատուներու միջոցով 2021 թուականին Ռուսաստանէն Հայաստան փոխանցուած գումարներուն ծաւալը 2019 թուականի եւ անոր նախորդած տարիներուն համեմատ նուազած է: 2021-ին փոխանցումներու աճ արձանագրուած է միայն 2020-ի համեմատ, երբ Քովիտի համավարակով պայմանաւորուած՝ ճանապարհները փակ էին: Այսպէս, ըստ Կեդրոնական դրամատան հրապարակած տուեալներուն, 2021 թուականին ՀՀ դրամատուներու միջոցով ֆիզիքական անձերու անունով Ռուսաստանէն Հայաստան փոխանցուած է 865 միլիոն 580 հազար տոլար:

2020 թուականին Ռուսաստանէն փոխանցումները կազմած են



Փորձագէտ Տաթևիկ Բեժանեան

824 միլիոն 360 հազար տոլար: 2019 թուականին Ռուսաստանէն ՀՀ փոխանցումները կազմած էին 1 միլիարդ 055 միլիոն 640 հազար տոլար, իսկ 2018-ին՝ 1 միլիարդ 049 միլիոն 564 հազար տոլար: Ինչ կը վերաբերի արտահոսքին, ապա 2021 թուականին Հայաստանէն Ռուսաստան ֆիզիքական անձերու կողմէ փոխանցուած է 401 միլիոն 807 հազար տոլար, 2020-ին՝ 459 միլիոն 593 հազար տոլար, 2019-ին՝ 425 միլիոն 984 հազար տոլար, իսկ 2018-ին՝ 471 միլիոն 658 հազար տոլար:

Ձուտ ներհոսքը, որ Ռուսաստանէն Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ փոխանցուած գումարներու տարբերութիւնն է, 2021 թուականին կազմած է 463 միլիոն 773 հազար տոլար: Ըստ Տաթևիկ Բեժանեանի՝ դեռ շուտ է վերլուծութիւններ ընելը, բայց այսօր տեղի ունեցող զարգացումները մասնագէտներուն թոյլ կու տան ներհոսքը, որ Ռուսաստանի մէջ ոչ-քաղաքացի աշխատողներու համար լաւ ժամանակներ չեն սպասեր:

Գլխաւոր Շտաբի Պետ Արտակ Դաւթեանը Պաշտօնանկ Եղաւ

Պաշտօնէն հեռացուած է Զինուած ուժերու Գլխաւոր շտաբի պետ Արտակ Դաւթեանը: Բարձրաստիճան պաշտօնեան արդէն երկրորդ անգամն է նոյն պաշտօնէն կը հեռացուի:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի առաջարկով եւս 4 բարձրաստիճան գինուորական պաշտօնանկ եղած են՝ Զինուած ուժերու հրթիռային զորքերու եւ հրետանիի պետ-վարչութեան պետ Արմէն Յարութիւնեանը, Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետի տեղակալ Անդրանիկ Մակարեանը, բարոյահոգեբանական ապահովման վարչութեան պետ Արթուր Պօղոսեանը, ճարտարապետական զորքերու պետ-վարչութեան պետ Արմէն Առուշանեանը:

Թէ ինչ է պաշտօնանկութիւններուն պատճառը, Պաշտպանութեան Նախարարութենէն չեն պարզաբանած: Չեն յայտնած նաեւ, թէ ով պիտի զբաղեցնէ Գլխաւոր շտաբի պետի եւ չորս վարչութիւններու պետերու պաշտօնները:

Պաշտօնէն հեռացուած երկու բարձրաստիճան գինուորականները՝ Գլխաւոր շտաբի պետն ու անոր տեղակալը կ'անցնին երկու տարբեր քրէական գործերով: Արտակ Դաւթեանը «ոչ-պիտանի հրթիռներ» անունը ստացած քրէական գործով կը մեղադրուի պաշտօնէական լիազօրութիւններու չարաշահման համար, իսկ Անդրանիկ Մակարեանը՝ մէկ այլ գործով ծառայութեան նկատմամբ անփոյթ վերաբերմունքի համար:

«Ոչ-պիտանի հրթիռներ»-ու քրէական գործով 5 ամիսէ աւելի է կալանաւորուած են պաշտպանու-



Գլխաւոր շտաբի նախկին պետ Արտակ Դաւթեան

թեան նախկին նախարար Դաւիթ Տօնոյեանն ու այլ բարձրաստիճան գինուորականներ:

Պաշտօնական տեղեկութեան համաձայն, 2018 թուականին բանակին համար ձեռք բերուած աւելի քան 4 հազար 200 ժամկէտանց, թեքնիք պահանջներուն չհամապատասխանող հրթիռներ քրէական գործի յարուցման պատճառ դարձած են:

Նախագահի լիազօրութիւնները կատարող Ալէն Սիմոնեանի հրամանագրով քանի մը օր առաջ նաեւ Գլխաւոր շտաբի պետի տեղակալ, Հետախուզութեան Գլխաւոր վարչութեան պետ Արայիկ Յարութիւնեանը ազատուած է իր պաշտօնէն: Պաշտօնանկ եղած է նաեւ Զինուած ուժերու թիկունքի պետ Ռոմիկ Մարգարեանը, անոր փոխարէն նշանակուած է Արամ Պօղոսեանը:

Պետական Պիտճէ Վերականգնուած է Աննախադէպ՝ Շուրջ 30 Միլիոն Տոլար

ՀՀ Պետական Եկամուտներու կոմիտէի Քննչական վարչութեան վարոյթին մէջ ՀՀ Քրէական Օրէնսգիրքի շարք մը յօդուածներու յատկանշիչերով քննուող բազմադրուազ քրէական գործի նախաքննութեան ընթացքին, առանձնապէս մեծ չափերով հարկեր չվճարելու առերեւոյթ յանցագործութեան դէպքի առթիւ, ՀՀ Քրէական Օրէնսգիրքի 205-րդ յօդուածի 2-րդ մասով յարուցուած եւ տուեալ քրէական գործին միացուած քրէական գործի քննութեամբ պարզուած է, որ «Չանգեզուրի պղնձամոլիպտենային կոմպլիքս» ընկերութեան նախկին գործադիր մարմինի ղեկավար՝ գլխաւոր տնօրէն հանդիսացող անձը, ղեկավարելով ընկերութեան կողմէ կազմակերպուած եւ իրականացուած շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունէութիւնը, առանձնապէս մեծ չափերով հարկեր չվճարելու նպատակով, օտարերկրեաց պետութիւններու մէջ արձանագրուած եւ իր հետ փոխկապակցուած ոչ-բնիկ համարուող կազմակերպութիւններու միջոցով եւ վերջիններու անունով յատուկ մշակուած եւ կիրառուած ծրագրով, կատարած է «Չանգեզուրի պղնձամոլիպտենային կոմպլիքս» ընկերութեան արտադրանքի՝ պղինձի խտանիւթի շուկայական կաշիւի նկատմամբ արժեքով մատակարարման գործարքներ, որու հետեւանքով ընկերութեան հարկուող շահույթը պակաս ցոյց տրուած է եւ այդ պատճառով պետական պիտճէ չէ վճարուած

աւելի քան 15,017,640,469 ՀՀ դրամ հարկեր եւ վճարներ:


Քրէական գործով ձեռք բերուած բաւարար ապացոյցներու համակցութեան հիման վրայ, «Չանգեզուրի պղնձամոլիպտենային կոմպլիքս» ընկերութեան նախկին գործադիր մարմինի ղեկավար՝ գլխաւոր տնօրէնին մեղադրանք առաջադրուած է ՀՀ Քրէական Օրէնսգիրքի 205-րդ յօդուածի 2-րդ մասով նախատեսուած յանցաւոր արարք կատարելու՝ առանձնապէս մեծ չափերով հարկեր չվճարելու համար:

Քրէական գործի նախաքննութեան ընթացքին ձեռք բերուած համապատասխան ելակէտային տուեալներու հիման վրայ 2021 թուականի Դեկտեմբեր 29-ին կազմուած է ստուգման արարք եւ առաջադրուած է լրացուցիչ գանձման ենթակայ ընդհանուր 15,017,640,469 ՀՀ դրամ պարտաւորութիւններ, որոնք 2022-ին ամբողջութեամբ վճարուած են պետական պիտճէ:

Յատկանշական է, որ 2017-2019 թուականներուն ընկերութեան իրական հարկուող շահույթը պակաս ցոյց տալու հետեւանքով հարկերու եւ վճարներու տեսքով պետութեան պատճառուած 15,017,640,469 ՀՀ դրամ գումարը՝ տուժերով եւ քրէական գործով հանդերձ, վերականգնուած է ոչ թէ «Չանգեզուրի պղնձամոլիպտենային կոմպլիքս» ընկերութեան գործող հաշիւներու հաշուին, այլ՝ սոյն քրէական գործով մեղադրեալ ընկերութեան նախկին գործադիր մարմինի ղեկավարին կողմէ՝ վերջինիս անձնական միջոցներէն:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՊԿ-ը Մեր Պարագային Չաշխատեցաւ, Բայց Ամէն Ինչ Ըրինք, Որ Ղազախստանի Սէջ Աշխատի. Փաշինեանը Թորքաւելին



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ղազախստանի Գախապահ Քասիմ-ժոմարթ Թորքաւելի հետ

Աշխատանքային այցով Նուր-սուլթանի մէջ գտնուող վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպած է Ղազախստանի նախագահ Քասիմ-ժոմարթ Թորքաւելի հետ:

Ողջունելով վարչապետ Փաշինեանը՝ Ղազախստանի նախագահը մասնաւորապէս նշած է. «Յարգելի Նիկոլ Վովայի, շատ ուրախ եմ տեսնելու Ձեզ, Ղազախստանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնները կը զարգանան կայուն կերպով: Այս տարի մենք կը նշենք դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակը, շատ կարեւոր տարեթիւ է: Բարձրագոյն եւ բարձր մակարդակներու վրայ մեր միջեւ հաստատուած է բաց քաղաքական երկխօսութիւն, կը զարգանան խորհրդարանական, մշակութային-մարդասիրական կապերը: Գիտէք, որ մենք Հայաստանի եւ հայ ժողովուրդին նկատմամբ կը տածենք ամենազօրեղ զգացմունքները, ես անձամբ Ձեզ եւ հայ ժողովուրդին մեծ յարգանքով կը վերաբերիմ: Կը կարծեմ, որ վատ չեմ տիրապետեր Ձեր ժողովուրդի պատմութեան, բարձր կը գնահատեմ մշակութի եւ միւս ոլորտներուն մէջ ձեռքբերումները:

Գործնականին մէջ մենք կը հանդիսանանք դաշնակիցներ Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան մէջ, Եւրասիական Տնտեսական Միութեան մէջ, անոր համար կը կարծեմ, որ մեր երկիրներուն միջեւ աչապիսի փոխյարաբերութիւնները կը համարուին ամենանախընտրելին: Ինչ կը վերաբերի Ղազախստանին, ապա մենք պիտի շարունակենք աշխատիլ այդ ուղղութեամբ»:

Իր հերթին, վարչապետ Փաշինեան նշած է. «Յարգելի Քասիմ-ժոմարթ Քեմելի, ուրախ եմ հան-

դիպել Ձեզ: Սա այս տարի դէմ առ դէմ մեր առաջին հանդիպումն է, սակայն մենք բազմիցս ենք խօսել հեռախօսով: Շատ ուրախ եմ, որ այն իրադարձութիւններից յետոյ, որոնք տեղի ունեցան Ղազախստանում, բնականոն կեանքը լիարժէք վերականգնուել է: Արդէն Եւրասիական Տնտեսական Միութիւնում մենք քննարկում ենք մեր տնտեսական հետագայ համագործակցութիւնը եւ Եւրասիական տնտեսական տարածքի հետագայ զարգացումը:

Յանկանում եմ ընդգծել, որ ուրախ եմ, որ վերջապէս Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան ճգնաժամային մեխանիզմներն աշխատեցին: Գիտէք, որ դա եղել է Հայաստանի Հանրապետութեան նախագահութեան առաջնահերթութիւնը: Մենք միշտ կարծել ենք եւ կարծում ենք, որ ՀԱՊԿ ճգնաժամային արագ արձագանգման մեխանիզմները պէտք է բնական աշխատեն: Ցաւօք Հայաստանը եղել է մի իրավիճակում, երբ մենք կարծում էինք, որ մեխանիզմը պէտք է գործի, սակայն, ցաւօք, դա տեղի չունեցաւ: Դրանից յետոյ մենք դարձանք ՀԱՊԿ-ում նախագահող երկիր եւ յայտարարեցինք, որ դա մեր առաջնահերթութիւններից մէկն է: Շատ ուրախ եմ, որ երբ անհրաժեշտ եղաւ՝ այդ մեխանիզմը կարողացանք գործարկել: Եւս մէկ անգամ ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել Ձեզ ջերմ խօսքերի եւ հիւրընկալութեան համար»:

Հանդիպման ընթացքին գրող-ցակիցները քննարկած են հայ-ղազախական յարաբերութիւններու օրակարգային տարբեր հարցերը, անդրադարձած են համալրման գործընթացներուն առնչուող շարք մը թեմաներու:

Հայաստան- Թուրքիա Բանազնացներ

Շարունակուած էջ 1-էն

նախապայմանների», ըսուած է Հայաստանի արտաքին գերատեսչութեան հաղորդագրութեան մէջ:

Հանդիպումէն յետոյ նոյնպիսի հաղորդագրութիւն տարածած է նաեւ Թուրքիոյ Արտաքին Գործերու Նախարարութիւնը:

Յիշեցնենք, որ անցեալ տարեվերջին Երեւանն ու Անգարան յարաբերութիւնները կարգաւորելու պատրաստակամութիւն յայտնեցին, երկուստեք յատուկ ներկա-

յացուցիչներ նշանակեցին: Ռուբէն Ռուբինեանի եւ Սերտար Քըլըճի առաջին հանդիպումը Մոսկուայի մէջ էր՝ 2022-ի Յունուար 14-ին: Հանդիպումէն յետոյ Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործերու նախարարութիւնները յայտարարեցին, որ կողմերը համաձայնած են շարունակել լիարժէք կարգաւորման ուղղուած բանակցութիւնները՝ առանց նախապայմաններու, ընդգծելով որ հանդիպումը ընթացած է դրական եւ կառուցողական մթնոլորտի մէջ:

2021-ին ԵԱՏՄ Երկիրներուն Հետ Առեւտրաշրջանառութիւնը Աճած Է 20,6 Տոկոսով. Փաշինեան

2021-ին, նախորդ տարուայ համեմատ, ԵԱՏՄ երկիրներու հետ առեւտրաշրջանառութիւնը աճած է 20,6 տոկոսով եւ կազմած է 2,7 միլիարդ տոլար, Նուր-սուլթանի մէջ, Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի հերթական նիստին ընթացքին տեղեկացուցած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Անոր խօսքով՝ Հայաստանէն ԵԱՏՄ երկիրներ արտահանման մատակարարումներու ծաւալը նոյն ժամանակահատուածին աճած է 25,2 տոկոսով: Ընդ որում՝ Փաշինեան նկատած է, որ փոխադարձ առեւտուրի մէջ արտահանման աճի կշիռը մեծ է արտահանման աճի կշիռը:

«Աճի լաւագոյն ցուցանիշներն ապահովել են թարմ եւ վերամշակուած գիւղատնտեսական արտադրանքը, ալքոհոլային եւ ոչ ալքոհոլային խմիչքները, հիւսուածեղէնի եւ կօշիկի արդիւնաբե-

րութեան արտադրանքը, ինչպէս նաեւ ԵԱՏՄ անդամ երկիրներում պահանջարկ ունեցող մի շարք այլ ճիւղերի արտադրանքները», ըսած է վարչապետը՝ շարունակելով, որ արտահանման ծաւալներու աճին գուզընթաց աճած են նաեւ Միութեան երկիրներէ Հայաստան ներմուծման ցուցանիշերը. «Այսպիսով, ծագման երկրի յատկանիշով ներմուծումն աճել է 18,5 տոկոսով»:

Փաշինեան յոյս յայտնած է, որ այս տարի համագործակցութիւնը պիտի ըլլայ ոչ-պակաս արդիւնաւէտ, այդ շարքին՝ Միութեան հիմնական ոլորտներուն մէջ յառաջընթացի եւ նոր նախաձեռնութիւններու իրականացման հաշուոյն:

«Այս փուլում չափազանց կարեւոր է պահպանել հաւաքած կշիռը եւ շարունակել տնտեսական մարտահրաւէրներին համատեղ արձագանգելու մեխանիզմների մշակումը», ըսած է Հայաստանի կառավարութեան ղեկավարը:

Պապիկեանն Ու Շոյկուն Քննարկած Են ՀՀ Զինուած Ուժերու Արդիականացման Ու Բարեփոխումների Ընթացքը



Նախարար Սուրէն Պապիկեան Ռուսաստանի պաշտպանութեան Գախարար Սերկէյ Շոյկուի Մոսկուայի մէջ հանդիպումի ընթացքին

Ռուսաստան կատարած աշխատանքային այցի ծիրին մէջ, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան հանդիպած է իր ռուս գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնութեան պաշտպանութեան նախարար, բանակի զօրավար Սերկէյ Շոյկուի հետ:

Հայաստանի ռազմական զբերատեսչութեան փոխանցմամբ՝ քննարկումներու ընթացքին անդրադարձած են ՀՀ զինուած ուժերու արդիականացման ու բարեփոխումներու ընթացքին:

Պապիկեան եւ Շոյկու բարձր գնահատած են հայ-ռուսական դաշնակցային համագործակցութեան եւ քաղաքական երկխօսութեան աշխուժութիւնը, Ռուսաստանի դերն ու ջանքերը՝ ուղղուած տարածաշրջանին մէջ ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման,

ինչպէս նաեւ Արցախի մէջ իրականացուող Ռուսաստանի խաղաղապահ առաքելութեան արդիւնաւէտութիւնը:

«Հանդիպման ընթացքում կարծիքներ են փոխանակուել միջազգային եւ տարածաշրջանային անվտանգութեան խնդիրների շուրջ: Քննարկուել են հայ-ռուսական երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափով ռազմական համագործակցութեան առնչուող մի շարք հարցեր», ըսուած է ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան տարածած յայտարարութեան մէջ:

Սուրէն Պապիկեանը Սերկէյ Շոյկուն հրաւիրած է պաշտօնական այցով ժամանել Հայաստան:

Հայաստանի պաշտպանական գերատեսչութեան ղեկավարը նաեւ ծաղկեպսակ դրած է Անյայտ գիտութեան յուշահամալիրին:

2021 Թուականին Արցախի Սէջ Ծնած Է 1541 Երեխայ

2021 թուականի ընթացքին Արցախի Հանրապետութեան Առողջապահութեան Նախարարութեան բժշկական հաստատութիւններուն մէջ ծնած է 1463 երեխայ՝ 734 տղայ, 729 աղջիկ: Ստեփանակերտի մէջ ծնած է 1337 երեխայ՝ 660 տղայ, 677 աղջիկ: Տարուան ընթացքին Արցախի մէջ արձանագրուած է գոյգ երեխաներու 22 ծնունդ:

Հայաստանի բժշկական հաստատութիւններուն մէջ ծնած են 78: Արդիւնքով՝ Արցախի Հանրապետութեան մէջ 2021 թուականի ընդհանուր ծնելիութիւնը կազմած է 1541 երեխայ՝ 779 տղայ, 762 աղջիկ:

Ուքրանիայէն Հայաստան Մեկնիլ Փափաքող Հայերու Թիւը Մեծ Է

Պատերազմի գոտիի վերածուած Ուքրանիայէն բազմաթիւ հայեր կը փափաքին մեկնիլ Հայաստան, ռազմական գործողութիւններու հինգերորդ օրը ըսած է Քիւեւի հայկական համայնքին ղեկավարը:

Նորիկ Գէորգեանը վստահ չէ, թէ արդէն քանի ընտանիք դուրս եկած է Քիւեւէն, քանի որ շատերը կը հեռանան երկրէն սեփական միջոցներով՝ առանց համայնքը տեղեկացնելու: Հեռանալու փափաք ունին ինչպէս Հայաստանի քաղաքացիները, այնպէս ալ Ուքրանիոյ քաղաքացի ազգութեամբ հայերը: Ուքրանիոյ մէջ ապրող ծագումով հայերու եւ Հայաստանի քաղաքացիներուն թիւը, ըստ Սփիւռքի յանձնակատարի գրասենեակին, կը հասնի 400 հազարի:

«Մարդիկ, ովքեր հնարաւորութիւն ունեն, դուրս են գալիս դէպի արեւմուտք, այստեղից անցնեն սահմանը դէպի Ռումինիա, Սլովաքիա, Լեհաստան: Այնտեղ Հայաստանի քաղաքացիներին ընդունում են առանց վիզայի. Հայաստանի կառավարութիւնը կազմակերպել է դա: Ուքրանիայի քաղաքացիներին էլ, բոլորին էլ, բաց են

թողնում շատ հեշտ, բացի տղամարդկանցից 18-ից 60 տարեկան: Մենք բոլորին խորհուրդ ենք տալիս մինչեւ ինչ-որ կայունութեան ստեղծուելը, մնալ տեղերում, որովհետեւ այսօր ճանապարհը շատ աւելի բարդ է, քան տեղում մնալը, սակայն մարդիկ, ովքեր իրենց համար որոշում են կայացնում, դուրս են գալիս, մենք այդ մարդկանց արդէն ուղեկցում ենք», ըսաւ Գէորգեան:

Գէորգեանի տուեալներով՝ Ռուսաստանի յարձակման դիմակայող Ուքրանիոյ մէջ հայերու շրջանակին մէջ, բարեբախտաբար, գոհեր չկան: Հայկական համայնքը Հայաստանի ղեկավարութեան հետ համատեղ կ'աջակցի այն ընտանիքներուն, որոնք կը փափաքին յաղթահարելով խոչընդոտները շարժիլ դէպի արեւմուտք՝ այնտեղէն ալ մեկնիլ այլ երկրներ, այդ շարքին՝ Հայաստան:

«Ճանապարհներին վիճակից, իմենիցքի, թէ՛րնոփոլ քաղաքներում ապաստան ենք տալիս մի գիշերով, որ առաւօտեան պարէտային ժամը վերջանալուց յետոյ շարժուեն դէպի սահման», ըսաւ Քիւեւի հայկական համայնքին ղեկավարը:

Լեռնային Ղարաբաղի Ժողովուրդը

Շարունակուած էջ 1-էն

կախ անոնց գտնուելու վայրէն եւ հանգամանքներէն՝ կոչ ընելով միջազգային հանրութեան՝ «պատասխանատուութիւն ստանձնելու Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում անվերապահ հասանելիութիւն ապահովելու համար»:

«ՄԱԿ-ի յատուկ ընթացակարգային մանտաթ կրողները մի քանի անգամ դիմում են յղել Ատրպէյճանին, որոնցում արծարծուած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան ծիրին մէջ վարձկաններ օգտագործելու, արտադատական մահապատիժներ, կամայական ձերբակալութիւններ, բռնի անհետացումներ, կրօնական եւ մշակութային ժառանգութեան ոչնչացման վերաբերեալ հարցեր: Ատրպէյճանը հրաժարուել է պատշաճ պատասխան տալ եւ փաստօրէն, ընդհանրապէս չի պատասխանել վերջին դիմումներին, ինչը բացառապէս մարտահրաւէր է ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների մեխանիզմին», նշած է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:

Ռուսաստանեան Ընկերութիւններ

Շարունակուած էջ 1-էն

Նախարարութեան մէջ արդէն յատուկ աշխատանքային խումբ ձեւաւորուած է, որ կը զբաղի գործող առեւտրային արհեստը այլ երկրներէ Հայաստան տեղափոխելու կամ նորը հիմնելու հարցերով:

Նախարար Քերոբեան կը վստահեցնէ, որ այստեղ արդէն հիմնուող ընկերութիւններուն համար գրանցումը շատ հեշտ է, խոչընդոտներ չկան:

Խնդիրները այլ փուլերու մէջ կը սկսին: Ըստ նախարարին, իրենք ամէն ինչ կ'ընեն այդ հարցերը լուծելու համար. «Այստեղ մեր խնդիրն է ոչ թէ այնպէս անենք, որ պիզնեսը հեշտ բացուի, դա արդէն

«Անպատեւելիութիւնը յանգեցնում է նոր խախտումներին», ընդգծած է Միրզոյեան՝ ներկայացնելով, որ Լեռնային Ղարաբաղէն բացի Ատրպէյճանը «շարունակում է մարդու իրաւունքների խախտումներ իր քաղաքականութիւնը՝ այժմ էլ Հայաստանի Հանրապետութեան սահմանամերձ շրջաններում, որտեղ քաղաքացիական բնակչութիւնը տուժում է Ատրպէյճանի զինուած ուժերի շարունակական սադրիչ գործողութիւններից»:

«Հրադադարի հաստատումից 16 ամիս անց Ատրպէյճանը շարունակում է պահել 38 հազ ռազմագերիներ, այդ թւում՝ քաղաքացիական անձանց, իսկ հարիւրաւոր անյայտ կորածների, այդ թւում՝ տասնեակ բռնի անհետացածների ճակատագրերը մնում են չբացայայտուած», յայտարարած է Արարատ Միրզոյեանը:

«Մենք ձգտում ենք հասնել հայերի անվտանգ, արժանապատիւ եւ կամաւոր վերադարձին իրենց հայրենի տները՝ Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում», ընդգծած է նախարար Միրզոյեան:

հեշտ է, [այլ] այնպէս անել, որ պիզնես անելը, պիզնես փակելը, Հայաստանում ապրելը, Հայաստանում երեխաներին կրթութիւն տալը եւ այլն յարմար լինեն, որպէսզի մարդիկ, ովքեր հայ չեն եւ հայաստանցի չեն, այնուամենայնիւ գտնուեն հաճելի միջավայրում, որտեղ ստեղծագործելը եւ աշխատելը աշխարհի մակարդակով մրցունակ միջավայր է»:

Հիմա հայաստանեան գործարար դաշտը կը հետաքրքէ նաեւ ուքրանական ընկերութիւններուն, վստահեցուց Քերոբեան, սակայն չներկայացուց, թէ քանի ընկերութիւն Ուքրանիայէն փափաքած են գալ Հայաստան կամ կը պատրաստուին:

Հրաժեշտի Ընդունելութիւն Ի Պատիւ Հայաստանի Աւագ Հիւպատոս՝ Դոկտ. Արմէն Բայրուրդեանի

Այս տարուան լոսանձեւ լոսայահ գաղութի մեծագոյն միջոցառումներէն մին հանդիսացաւ հրաժեշտի մեծ ընդունելութիւնը, իրանահայ Միութեան սրահին մէջ, որ տեղի ունեցաւ անցեալ Ուրբաթ, Փետրուարի 25-ին, 2022, երեկոյեան ժամը 7-ին: Արդարեւ, սոյն շքեղ ընդունելութիւնը սարքուած էր իր պատիւ Հայաստանի Հանրապետութեան Լոս Անձեւոսի աւագ հիւպատոս եւ դեսպան Դոկտ. Արմէն Բայրուրդեանի, իր պաշտօնավարութեան շրջանի լրումին առիթով:



Ս.Դ.Յնչակեան Կուսակցութեան կողմէ գրիգոր խոտանեան յուշանուէր կը յանձնէ Արմէն Բայրուրդեանին

Շրջանէս աւելի քան 500 հոգիներ, որոնք կը ներկայացնէին տարբեր կազմակերպութիւններ, եկած էին ողջերթ մաղթելու մեծարեալ հիւպատոս Դոկտ. Արմէն Բայրուրդեանին եւ իր ազնուփայլ տիկնոջ Իվեթին: Հիւրերու մէջ կը գտնուէին նաեւ Արցախի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի նախկին հիւպատոս Վալերի Մկրտումեան, Կլենտէյլի քաղաքապետուհի Փաուլա Տիվայն, Լոս Անձեւոսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փոլ Գրիգորեան եւ այլ անձնավորութիւններ:

Հիւրասիրութեան բաժնի աւարտին գործադրուեցաւ օրուան յատուկ յայտագիր մը, հանդիսավարութեամբ տեղական հեռատեսիլի անուանի խօսնակ Արաքսիա Կարապետեանի: Շնորհալի երգչուհի Անահիտ Ներսիսեանի կատարմամբ եւ Կրեկ Հօշարեանի նուագակցութեամբ ունկնդրուեցաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի պետական հիմները: Այնուհետեւ մեծարեալին գնահատանքի խօսքերով հանդէս եկան հայ համայնքի հոգեւոր առաջնորդներ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Գերայ. Միքայէլ Եպս. Մուրատեան եւ Վերայ. Հենրիկ Շահնազարեան:

Դրուատանքի ելոյթներով յաջորդաբար հանդէս եկան Կլենտէյլի քաղաքապետուհի Փոլա Տիվայն, Լոս Անձեւոսի քաղաքապետութեան ֆոլ Գրիգորեան, ինչպէս նաեւ Պրայմէքսի, Փասատինայի եւ Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդներու եւ ենթակառուցներու տասնեակ մը պատասխանատուներ, որոնք իրենց գնահատանքի եւ շնորհաւորական ելոյթներով եւ պաշտօնական հուշակագրերով, պատուեցին մեծարեալ հիւպատոսը: Ս.Դ. Յնչակեան Կուսակցութեան անունով խօսք առաւ Գրիգոր Խոտանեան եւ իր բարեմաղթութիւնները փոխանցելէ ետք Դոկտ. Բայրուրդեանին յանձնեց յուշանուէր մը (Մայքլ Արամի ստեղծագործութիւններէն): Բոլոր ելոյթ ունեցողներն ալ բարձր գնահատեցին Արմէն Բայրուրդեանի ղեկանազիտական շնորհները ու առանձնապատկութիւնները, յատկապէս նուիրումն ու ծառայասիրութիւնը ի նպաստ Հայաստանի եւ

Արցախի հզօրացման ու բարգաւաճումին:

Օրուան մեծարեալը Դոկտ. Արմէն Բայրուրդեան, խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց ներկայ հասարակութեան եւ ելոյթ ունեցող անձնավորութիւններուն, իրենց յարգանքի արտայայտութիւններուն համար: Ան անդրադարձաւ նաեւ իր պաշտօնավարութեան շրջանին տեղի ունեցած ձեռքբերումներուն թէ տեղական մակարդակով եւ թէ Հայաստանին ու Արցախին ի նպաստ իր նախաձեռնութեամբ արձնագրուած յաջողութիւններուն մասին:

Այնուհետեւ ներկայները հետաքրքրութեամբ դիտեցին մեծարեալ դիւանագետին վերջին 30 տարիներու գործունէութեան նուիրուած տեսաերիզ մը, ուր դրուագներ կային Հնդկաստանի, Գանատայի, ԱՄՆ-ի եւ այլ վայրերու մէջ որպէս դեսպան, իր պաշտօնավարած շրջանի հանդիպումներէն:

Սոյն յիշարժան միջոցառումի պաշտօնական բաժինէն ետք՝ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ յայտնի երգիչ Յարութ Բամպուքճեանի, դաշնակահար Կրէկ Հօշարեանի, տուտուկահար կրտսեր ձիւան Գասպարեանի եւ Վարդան Գէորգեանի պարի համոյթէն մենապահուրհիներու, որոնք իրենց գեղարուեստական կատարումներով, առաւել եւս խանդավառեցին օրուան մթնոլորտը:

Ուշ երեկոյեան ներկայները մեկնեցան սրահէն իրենց հետ տանելով մեծարանքի գեղեցիկ միջոցառումի մը մասնակցած ըլլալու լաւագոյն տպարւորութիւններով, իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցելով մեծայարգ դիւանագետին:

Կ'իմամանք թէ Դոկտ. Արմէն Բայրուրդեան ընկալեալ սովորութեան համաձայն, աշխատանքային պարտաւորութիւններէն ետք, կը մեկնի մէկ տարուան դիւանագիտական հանգիստի:

Բարի երթ, քաջառողջութիւն եւ նորանոր յաջողութիւններ սիրելի աւագ հիւպատոս եւ դեսպան Դոկտ. Արմէն Բայրուրդեանին:

Գ.Մ.

Բոլոր ժամանակներու Ազգային Ուղիի Դաստիարակը (Զօրավար Անդրանիկի Ծննդեան Տարեդարձին Առիթով)

ԱԼԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

«Քաջ անուռը պիտի չիշուի դարէ դար, հսկայ լեռինք քեզ ապաստան Անդրանիկ» նախադասութիւնը դեռ պատանեկան տարիներուն երգելով, ազգային դպրոցներու աշակերտներս անուղղակիօրէն կը ստանայինք հայրենասիրութեան առաջին սերմերը: Գոնէ Լիբանանի մէջ, անցեալ տասնամեակներուն:

Նախախնամութիւնը բացառիկ ճակատագիր վերապահած էր այն անձնաւորութեան, որ իր մանկական առաջին ճիշդ արձակեց 25 Փետրուար 1865-ին՝ Շապին Գարահիսարի մէջ: Ընտանեկան աննշան երգիքի մը տակ ծնած Օզանեան Թորոսի գաւակ Անդրանիկը, տասնամեակներ ետք, արդէն պիտի դառնար փայլող աստղ մը իր ժողովուրդին համար, որուն ընդմէջէն ան պիտի տեսնէր ազգային ժողովրդական հերոսը, անխոցելի մարտիկը եւ «հայրէ նիքին տէր ու պաշտպան Անդրանիկը»: Այս ըստ բախտի եւ դիպուածի արդիւնք չէր բնականաբար, այլեւ՝ կեանքի ու մահուան գնով, հաւաքի պայքարի եւ հմտութեան շնորհիւ ձեռք բերուած անուրանալի վաստակ, որուն արժանի կը դառնան խիզախ, ինքնամոռաց, ինքնավստահ ազգասէրները, ռազմական-քաղաքական հոտառութիւն եւ ընդոժին շնորհք ունեցող բացառիկները, կեանքի վտանգները քամահրող կտրիճները:

Զօրավար Անդրանիկի կեանքի ուղին, իր առած քայլերը, արտայայտած խոհերն ու դիրքորոշումներն, շփումներն ու նոյնիսկ կենցաղային մանրամասնութիւնները որքան իրական, նոյնքան ոգեշնչող դէպքերու շղթայ մը կը թուի ըլլալ: Այնքան առինքնող հերոսը բերնէ բերան դարձած է առասպելատիպ կերպար մը, որուն շուրջ գրուած են գեղարուեստական ու պատմագիտական գիրքեր, յուշագրատուներ եւ խանդավառիչ երգեր ու ներբողներ: Անդրանիկ անշնչելիօրէն դրոշմուկեցաւ մեր ժողովուրդին յիշողութեան մէջ. մնաց ու կը մնայ անկրկնելի իր տեսակով, իր վեհութեամբ ու ազգային ոգիի դաստիարակի իր կոչումով:

Ընդգծելի երեւոյթ մը յատկանշական է մեծ Զօրավարին առուժով. անորմով հիացած են ժողովուրդի ամենախոնարհ չեղածներէն մինչեւ բարձրագոյն գիտնորականներ եւ մտաւորական շրջանակներ. սեղանակից ու գիտնակից եղած են տարբեր հոսանքներու եւ խառնուածքներու տէր մարդիկ: Իսկ աւելի շեշտելի է այն՝ որ թշնամիներ՝ քիւրտ թէ թուրք ու թաթար զայն նկատած են հարկու մղձաւանջ մը ամէնուր շրջող. թրքական կողմը բնաւ պիտի չմոռնայ Անդրանիկի անունը, որովհետեւ հայկական կողմէ ամենակոշտ հարուածները ստացած է Մասնոյ Արծիւ՝ Զօրավար Անդրանիկէն:

Անդրանիկի պարագան նկատի առնելով, կարելի է փաստել, որ պայման չէ ի ծնէ տիտղոսակիր ըլլալ, պարտադիր չէ ի բնէ ազնուական արիւն ունենալ դառնալու համար ժողովուրդին սիրելին կամ անոր առաջնորդը: Բրիտանացի հազարապետ Ու. Կիպլինգ տեսակցելէ ետք Զօրավարին հետ, տպաւորուելէ յետոյ անոր պինդ ու ժայռատիպ կեցուածքով, կը վկա-

յէ՝ «Ծագումով ատղձագործ, ան իրենց անթագ թագաւորն է»:

յի Չարդերը, "The Horrors of Adana" կը ներկայացնէ էթնիք բռնութեան համապարփակ պատկերը, լոյս սփռելով այն հարցերուն վրայ, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ սովորական մարդիկ կրնան յանցագործ դառնալ:

Հակառակ այս դէպքերուն նշանակութեան եւ բռնութեան ու քանդումի ծաւալին, Ատանայի Չարդերը յաճախ դուրս մնացած են պատմական ներկայացումներէ, յատկապէս օսմանեան եւ միջին արեւելեան պատմագրութեան մէջ: Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողները կը շարունակեն գրգռութեան կեղծ դրոյթը տարածել այս Չարդերուն առնչութեամբ, Ատանայի «դէպքեր»ը կամ «չուզումներ»ը դիտելով իբրեւ հայերու ձախող ըմբոստացում մը՝ եւրոպական միջամտութիւնը յարուցելու եւ կիրկիտոյ թագաւորութիւնը վերականգնելու յետին նպատակով: Աւելի՛ն. բռնութիւնը հայկական «գրգռութիւններ»ու բնական արդիւնքը կը նկատեն: Տէր Մաթոսեան անհրաժեշտ սրբագրութիւն կը կատարէ, փաստարկելով, որ Ատանայի Չարդերու պէս երեւոյթները պատահական չեն, այլ հետեւանքն են բարդ ու գիրար խաչածեղ շարք մը ազդակներու, որոնք խարսխուած են քաղաքական ու ընկերա-տնտեսական կեանքի փոփոխական հողին վրայ: Գիրքը նաեւ կ'անդրադառնայ Ատանայի Չարդերը լաւագոյնս հասկնալու հարցին՝ Հայոց Ցեղասպանութեան լոյսին տակ, առանձինն դիտարկելով իւրաքանչիւր դէպքի ընթացիկը, աւելի քան առաջինը պարզապէս դիտելով իբրեւ երկրորդին նախանշանը:

Պետրոս Տէր Մաթոսեան Նեպրասքայի համալսարանի (Լինքոլն) պատմութեան բաժանմունքի ամպիոնի տեղակալն է, արդի միջին արեւելեան պատմութեան գործակից դասախօս եւ հրէական ուսման «Հայմըն Ռոզենպէրկ» դասախօս: Հայագիտական Ուսմանց Ընկերութեան (SAS) նախագահն է նաեւ: Ծնած ու մեծցած է Երուսաղէմի մէջ, ուր աւարտած է Եբրայական համալսարանը: Միջին Արեւելքի պատմութեան իր դոկտորականը ստացած է Գոլուփիա համալսարանի միջին արեւելեան, հարաւ ասիական եւ փրիկեան ուսմանց բաժանմունքէն (2008): 2008-2010ին, Մասաչուսէցի Թեքնոլոգիի հիմնարկի (MIT) միջին արեւելեան պատմութեան դասատու եղած է, իսկ 2014ի գարնան՝ Շիքակոյի համալսարանի «Տուսանեան» այցելու դասախօս:

Թախծով Պարուրուած Չյագեցած Կարօս (Սեդա Անանեանի «Անմոռաց Անուններ» Երր Գիրքը)

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

...Հեռուից, ուրիշ աշխարհամասից եկող հեռաձայն.

Հենրիկ դու ե՞ս...

Այո, այս ես եմ, ո՞վ է հեռաձայնողը:

Սեդան եմ Հենրիկ, Սեդա՞ն:

Ո՞ր Սեդան, ես մի քանի Սեդա գիտեմ, բայց նրանք վաղուց կորել են իմ կեանքից:

Դու ինձ հետ կարող չիլիշել, ես Անանեան Սեդան եմ..., Անանեան,

Օ՞ւ, Անանեան Սեդան..., Համալսարան, 1956 թվական...երանելի օրեր...

Այո, այո, այդ Սեդան, որի ազգանունը մէկ տառով է տարբերուում քոնից:

Այո, ժամանակին, յաճախ էին շփոթում: Ո՞րտեղից ես հեռաձայնում:

Լոնդոնից, համարը քոյրս փոխանցեց: Արդէն 30 տարի է ինչ Գլենդէյլում է ապրում:


Հիմա ինձ լսիր սիրելիս: Քրոջս՝ Սէրիկի միջոցով քեզ կ'ուղարկեմ վերջին գիրքս: Շատ կ'ուզէի իմանալ քո կարծիքը: Ես մշտապես հետեւում եմ քո բոլոր գրուածքներին ու քո գնահատականն ինձ համար շատ կարեւոր է: Վստահ եմ, քեզ հաճելի կը լինի իմանալ, որ քո՝ Հանրագիտարանի խմբագրութիւնը թողնելուց յետոյ, ես եմ փոխարինել քեզ ու երկար տարիներ աշխատել այնտեղ, մինչեւ 12 հատորի լրանալը: ***

... Գրասեղանիս վրայ է Սեդա Անանեանի «Անմոռաց անուններ» գիրքը, որը հրատարակել է Գիտութիւնների Ակադեմիայի Արուեստի ինստիտուտը: Սա արդէն գրքի գնահատման չափանիշ է: Նոյնքան գնահատելի ուղեւոր է Պրոֆ. Արծրուն Աւագեանի՝ գրքի հմտորէն լուսաբանուած հիանալի գրութեան բովանդակութիւնը:

Սեդա Անանեանը սովորել եւ աւարտել է Երեւանի պետական համալսարանի Ռոմանոֆեմանական ֆակուլտետի Ֆրանսերէն լեզուի բաժինը: Աշխատել է գրականագէտ-թատերագետ Ռուբէն Զարեանի ղեկավարած Արուեստի ինստիտուտում: Խոշոր գիտնականի խորհրդին հետեւելով Սեդան սկսել է զբաղուել լրագրութեամբ: Այնուհետեւ, 17 տարի շարունակ աշխատել է Հայկական Սովետական Հանրագիտարանի Արուեստի խմբագրութիւնում:

Անշուշտ ես մէկ առ մէկ չեմ անդրադառնալու «ԱՆՄՈՒԱՅ ԱՆՈՒՆՆԵՐ» գրքի ամէն մի յօդուածի, դրանք շատ են, եւ յետոյ, լրագրի սահմանները թոյլատու չեն գրականագիտական ծաւալուն յօդուած հրատարակել: Ուստի ես հիմնականում կ'անդրադառնամ մի քանի ծաւալուն նիւթերին:

Երանաւէտ բախտ է մեծանալ, հասակ առնել մի այնպիսի ընտանիքում, մի այնպիսի միջավայրում, ուր գիշեր ու գոր թագաւորում է հայ գիրն ու գրականութիւնը: Ի վերուստ Սեդա Անանեանը արժանացաւ այդ բախտին: Նրա մօրաքրոջ տղան էր ճանաչուած եւ սիրուած թատերագետ, գրականագէտ եւ հրատարակախոս Լեւոն Հախվերդեանը, որի յարկի տակ է հիմնականում հասակ առել Սեդան: Առօրեայ կեանքում ասող-խօսող, չուժորի վարպետ Լեւոնի բնակարանը իսկական թիֆլիսի վերնատունն էր յիշեցնում, ուր



հաւաքուած էր Հայ Գրականութեան գործիչների ընտրանին, որոնց թուում՝ Պարոյր Սեւակն ու վահագն Դաւթեանը, Գրիգոր Քէշիշեանն ու Շահէն Թաթևեանը եւ այլոք:

Մտաւորականների հաւաքատեղի էր մօրաքրոջ բնակարանը, գրում է Սեդա Անանեանը, ուր անպակաս էին գրական կատաղի վեճերն ու անգիջում տարակարծութիւնները

Եւ յետոյ, գիշերուայ ուշ ժամին մէջտեղ էր գալիս Քարահունջի օդին ու մթնոլորտը խաղաղում էր: Եւ այդպէս՝ գրեթէ ամէն օր:

Լեւոն Հախվերդեանին նուիրուած այս հատուածում չեմ կարող մէջբերում չանել մահից շատ կարճ ժամանակ առաջ, 2003 թվականին թղթակցի կողմից իրեն ուղղուած՝ «Իսկ ո՞րն է ձեր կեանքի ամէնամեծ հրասթափութիւնը» հարցի պատասխանից, որ գրի է առել Սեդա Անանեանը.

Երբեք մտքովս չէր անցնի, որ ազատ, անկախ Հայաստանը այսքան շատ անարժան գաւակներ է ծնել՝ անկախութեան հռչակումի հենց սկզբից մինչեւ հիմա: ...Անբարոյ, ազգավնաս, ազգա ու աչքածակ, ոճրագործ լինելը չեմ ներում, ու չեմ ների..., էս ի՞նչ օրի ցեղեցին Հայաստանը: Ափսոս քեզ Հայ ժողովուրդ:

Եւ այս մարգարէական խօսքերն ասուած են գրեթէ 20 տարի առաջ: Մի բան փոխուե՞լ է այսօր, Այո, աւելի է վատացել...

Ինչպէս վերեւում նշեցի Սեդա Անանեանը 17 տարի աշխատել է Հայկական Հանրագիտարանի խմբագրութիւնում, ու, ըստ այնմ էլ լիովին հնարաւորութիւն է ունեցել օգտուել Գրականութեան եւ Արուեստի թանգարանի նիւթերից ու մշակույթի գործիչների մասին յայտնաբերել մինչ այդ փակ ու գաղտնի համարուող բազմաթիւ նիւթեր:

Բծախնդիր փնտռութիւն արդիւնքում Սեդան ընթերցողին է ներկայացնում համապարփակ տեղեկութիւններ Մեծ Եղեռնից հրաշքով փրկուած, Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցում յայտնուած գրող, թարգմանիչ Խաչիկ Դաշտենցին:

Վերջինս, հագիւ հրապարակելած, ականատես է լինում Գրողների Միութեան անդամների միջեւ ծագած հակամարտութիւններին, որի արդիւնքում ազգայնամոլ գրողների համարուող Եղիշէ Զարենցը, Վահան Թոթովենցը, Ակսել Բակունցը Զապէլ Եսայեանը, Գուրգէն Մահարին, Վահրամ Ալազանը,

Վաղարշակ Նորենցը եւ բազմաթիւ մտաւորականներ ժամանակի ընթացքում կոտտանքների են ենթարկուած KGBի կողմից՝ ընդհուպ մինչեւ աքսոր ու գնդակահարութիւն:

Այդ օրերին, գրում է Սեդա Անանեանը, Դաշտենցն արդէն գրաւել էր հակադիր բանակի ուշադրութիւնը, ուստի վտանգաւոր ու ամէնատես աչքից հեռու մնալու համար որոշում է Մոսկուա մեկնել, որտեղ ընդունուած է Գորկու անուան համաշխարհային գրականութեան ինստիտուտի անգլերէնի բաժինը: Այստեղ էլ հաստնանում է Դաշտենց բանաստեղծի թարգմանական տաղանդը, եւ Մոսկուայում իսկ թարգմանում է Շէքսպիրի «Յուլիոս Կեսար» դրաման: Դրանից յետոյ, ինչպէս Սեդան է գրում՝ «Շէքսպիրը դառնում է Դաշտենցի տարբերքը»:

«Կեսար»ին են յաջորդում Շէքսպիրեան եւս 18 գործեր, ինչպէս նաեւ օտար հեղինակների բազմաթիւ թատերգութիւններ, այդ թուում՝ Ուիլյամ Սարոյեանի «Իմ սիրտը լեռներում է» յայտնի դրաման, որը տարիներ շարունակ խաղացուեց Երեւանի Սոււնդուկեանի անուան թատրոնում:

Եւ սակայն, գրում է Անանեանը, Դաշտենցի սրտի մէջ մի անբուժելի ու ցաւօտ վէրք էր մորմոքում..., դա կորուսեալ հայրենիքն էր, Սասուն երկրի անսահման կարօտը:

Եւ նման անմեկնելի կարօտի եւ քաղցր ու դառն յիշողութիւնների արդիւնքում, երկար տարիների քրտնաջան աշխատանքով Դաշտենցը երեւան է հանում, ինչպէս Սեդան է ասում՝ ԻՐ ԿԵԱՆՔԻ ԳԻՐՔԸ՝ «Ռանչպարների կանչը» փառայեղ եռմասնի վաւերական վէպը:

Գրքի հերոսները հիմնականում ժողովրդի ծոցից ելած հողագործ ունչպարներ են, որոնք Հայրենիքի համար մղուած պայքարի բովում դառնում են անձնագործ մարտիկներ՝ ֆիդայիներ ու զօրավարներ: Ահա նրանց անունները. Արաբօ, Աղբիւր Սերոբ, Գէորգ Զառչ, Անդրանիկ եւ Հա՛տչատ ուրիշ ֆեդայիներ:

Խաչիկ Դաշտենցի եւ նրա «Ռանչպարների կանչը» գրքի մասին Սեդա Անանեանի պատմուածքանման գրառումը «ԱՆՄՈՒԱՅ ԱՆՈՒՆՆԵՐ» գրքի լուսագոյն մասերից է:

Գերագոյն հաճոյքիս խառնուած թախծի ու հրասթափութեան զգացումը մի ամբողջ օր մտքիցս չհեռացաւ՝ կարդալով Սեդա Անանեանի սքանչելի յօդուածը՝ բաւական ուշ «յայտնաբերուած» գրող Վահան Թոթովենցի մասին: Ծաւալուն գոյգ յօդուածներն ընթերցելիս դժուար չէր հասկանալ թէ ինչպիսի հոգեկան ծանր ապրումներ է ունեցել գրող Սեդան գրառումն անելիս:

1920-ական թ.թ. Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ, Հայրենիքը վերականգնելու մտահոգութիւնից զրոգուած, մեծաթիւ մտաւորականներ, արուեստագէտներ արտասահմանից վերադարձան Հայաստան: Նրանց թուում էր աշխարհը շրջած, Ամերիկայից վերադարձած Վահան Թոթովենցը, որին յաջորդեցին Կոստան Զարեանը, Զապէլ Եսայեանը եւ շատ ուրիշներ:

Հակառակ իր կարծատեւ կեանքին, Գրում է Սեդա Անանեանը, նա թողել է գրական մեծ ժառանգութիւն, որ բեղուն է եղել յատկապէս

1929-36 թ.թ.: Այդ ժամանակ է գրել «Նոր Բիւզանդիոն» դրաման, «Ամերիկա» պատմուածքների ժողովածուն, «Իմ հորաքոյրը» վիպակը, «Բաց կապոյտ ծաղիկներ» պատմուածքը, որի հիման վրա, 1980 թվականին Հենրիկ Մալեանը նկարահանել է «Կտոր մը երկինք» ժապաւէնը:

Երկար չ'ապրեց Թոթովենցը Հայաստանում: Նրա բուռն ստեղծագործական կեանքը ընդհատուեց ամէնքին ծանօթ 1936ի բռնարարների եւ ձերբակալութիւնների պատճառով: Ի թիւս այլոց ձերբակալուած է նաեւ Վահան Թոթովենցը:

Այս մի քանի տողը Սեդա Անանեանի՝ Թոթովենցի կեանքի վերջին ժամերի մասին.

Անհնար լինելով այլեւս դիմանալ դժոխային լիկանքներին՝ 1938ին Թոթովենցը ստիպողաբար ստորագրում է գարնուրելի մեղադրականը..., դահիճները «մեծահոգաբար» թոյլ են տալիս հրաժեշտ տալ միայն նրա կնոջն ու որդուն:

Վահան Թոթովենցը միայն յետմահու ճանաչուեց ու գնահատուեց Հայաստանում՝ դառնալով որպէս կապող օղակ արեւելահայ եւ արեւմտահայ գրական գործերը շաղկապող օղակ, ինչպէս Սեդան է գրում՝ «պատմական հայրենիքի եւ կարօտի գրականութեան ակնառու դէմքը, ինչպէս Շահնուրը, Որբունին, Համաստեղը, գիւղագիր Մնձուրին եւ միւսները՝ տարագիր Սփիւռքում»:

Սեդա Անանեանը երկու յօդուածներով սքանչելի տողեր է նուիրել 20րդ դարի նշանաւոր քաղաքական գործիչ Ռուբէնի (Ռուբէն ՏէրՄինասեան) գրառած «Յիշատակներ» ժողովածուի մասին: «Յիշատակներ»ը վաւերագրական մեծագրութիւն է, որի գործող անձինք կենդանի մարդիկ են, որոնք ազգայինազատագրական պայքարի բովում դառնում են Ֆիդայիներ, հրամանատարներ:

Ռուբէնի «Յիշատակներ»ը, գրում է Սեդա Անանեանը, իր բարերար, խթանիչ ազդեցութիւնն է ունեցել հայ գրականութեան որոշ ստեղծագործութիւնների վրայ: Հենց Խաչիկ Դաշտենցը, որն իր «Ռանչպարների կանչը» վիպասքը գրելիս ոչ միայն օգտագործել է Եղեռնից փրկուած անձանց վկայութիւններ, պատմական ուսումնասիրութիւններ կատարել, այլեւ, իր իսկ աղջկայ՝ գրագանազատ Անահիտ Դաշտենցի վկայութեամբ օգտուել է նաև Ռուբէնի «Յիշատակներ»ից:

Մեծանուն գրող Կոստան Զարեանը նոյնպէս օգտուել է Ռուբենի «Յիշատակներ»ից որի արդիւնքում ընթերցողի սեղանին է դրուել հոգեմաշ, ցնցող մի պատմութիւն Ֆիդայիների կեանքից՝ վերնագրուած «Տատրագոմի հարսը» անուամբ:

Սեդա Անանեանի միանգամայն ճշգրիտ բնորոշումով, Կոստան Զարեանը Հայաստանում սկսուեց լայնօրէն ճանաչուել Անկախութեան առաջին իսկ օրուանից: Աշխարհը «նոր տակ տուած» այդ հսկայ գրողը իր կեանքի վերջին 7 տարին ապրեց Երեւանում (196269)՝ իշխանութիւնների կողմից ոչ այնքան ջերմ ընդունելութեան կարգավիճակով: Սեդա Անանեանը երկու տարի եղել է նրա անձնական քարտուղարը եւ օգնել նրան կարգի բերել գրողի արխիւը

Յունահայ Գաղութը Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեան (1870-1951)

30 Դպրոցներ, 35 Պարբերականներ, 5 Համայնքներ

ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յունաստան Եղեռնին Ետք

Զմիւռնիոյ 1922 թուի հայկական կոտորածներէն մագապուրծ ազատած հայ խլեակներ, ներառեալ մեծ թիւով որբեր, Յունաստան ապաստան գտան ուր կազմեցին հրաշքի համագոր հայկական գաղութ, թեմ, դպրոցներ եւ միութիւններ, շնորհիւ թեմի երկարամեայ Առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեանի (1918-1951): Աթէնքի հայ գաղութը նախապէս 1905 թուին մայրաքաղաքի Բրիտիզի փողոցին վրայ հողաշերտ մը գնած էր եւ հոն մատուռ մը կառուցած, որուն հանգանակութեան նպաստած էր նաեւ Յունաստանի թագուհին: Աւելի ետք, Տիգրան Խան Քէլէկեանի բարերարութեամբ կառուցուած էր Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին, եւ իսկոյն հաստատուած է Յունահայ թեմի առաջնորդութիւնը Տ.Տ. Գէորգ Ե. Սուրէնեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական յատուկ կոնդակով:

1915-ի եղեռնէն ետք Յունաստանի հայ գաղութը ստուարացաւ, մանաւանդ Զմիւռնիոյ մեծ աղետէն ետք, մօտ 120,000 հայորդիք, ներառեալ 20,000-ի հասնող հայ որբեր ապաստան գտան Յունաստանի ափերուն: Նորահաս այդ նախառական գաղութականները նախ վրաններու եւ թիթեղածածկ տնակներու մէջ ապրեցան, որոնց կողքին երբեմն փոքրիկ կրպակներ շինելով իրենց ապրուստը կը ճարէին: Հայեր Աթէնքի մէջ կեդրոնացած էին, եւ մաս մըն ալ Թրակիա՝ յատկապէս Սելանիկ, Բիրէա, Կրետէ, Սամոս, Միդիլիմի, Քիոս եւ Քորֆու կղզիներուն մէջ, բոլորն ալ Եգէական ծովուն վրայ:

Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեան Թեմակալ Առաջնորդ

1918-ի գինադադարէն ետք, թեմի առաջնորդութիւնը ստանձնեց Պանտրմա-Պալը-քեսերի նախկին Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեան, որ 1915 թուին իր թեմի ժողովուրդին հետ գաղութական ելած էր տարագրութեան հոսանքին հետ: Ծնած էր Պարտիզակ 1870-ին, վարդապետ ձեռնադրուած Նիկոմիդիոյ Առաջնորդ Ստեփաննոս Յովակիմեան Սրբազանէն, եւ 1910 թուին եպիսկոպոս՝ Ամենայն Հայոց Տ.Տ. Մատթէոս Բ Կաթողիկոսէն: Իր տառապագին թափառումներէն ետք Մազլըմեան Եպիսկոպոս կարողացած է Երուսաղէմի հայոց վանքը ապաստանիլ՝ թուրք կառավարութեան արտօնութեամբ, մաս կազմելով Տ.Տ. Սահակ Կաթողիկոս-Պատրիարքի սինոդական եպիսկոպոսներուն: Զինադադարին երբ բոլորը միասին աքսորուեցան Երուսաղէմէն, Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեան ուր նաեւ ընտրուեցաւ Առաջնորդ: Յունահայ թեմի եկեղեցական եւ ազգային վարչութիւնը երկու միացեալ կեդրոններ ունէր թեմին եւ ազգային վարչութիւնը երկու միացեալ կեդրոններ ունէր թեմին եւ ազգային վարչութիւնը: Առաջնորդ կը ղեկավարէր Յունահայ թեմի երկու Առաջնորդներ կը գործակցէին, մին Աթէնքի Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեանը, եւ միւսը Թրակիոյ Երուսաղէմ Եպիսկոպոս Փերտահճեանը, որոնք որբարինամ հոգածութիւնը նախապայման համարեցին, քանի որ հայ որբեր յոյն որբանոցներու մէջ գետեղուելով ստուգ վտանգի առջեւ կը գտնուէին, կորսնցնելով իրենց հարազատ կապը հայերէն լեզուին հետ: Առաջնորդ Սրբազանները ահագանգ հնչեցուցին որ հայկական դպրոցներ իսկոյն բացուէին, ու յաջողեցան այդ վեմ եւ գրեթէ անկարելի առաքելութեան մէջ:

Մազլըմեան Սրբազան նախ Որբարինամ Միութիւնը հաստատեց Աթէնքի մէջ, դիմելով արտասահմանի օգնութեան: Աթէնք հասան վահան թէքէեան, թէղդիկ, եւ Արշակ Ալպոյաճեան: Թէքէեան եղաւ այն ազդեցիկ անձը որ Յունաստանէն Եգիպտոս վերադառնալով, տեղւոյն Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանի քաջալերանքով բազմիցս խօսեցաւ թէ «մեր ազգին պատկերը չափազանց տխուր է այսօր, ու պատկերին մոտ կողմը Յունաստան ներկայիս գտնուող հայ գաղութականներն ու որբերն են»: Մասնաւորելով իր խօսքը հայ որբերուն, թէքէեան կը հաղորդէր թէ յաւելեալ 7500 որբեր Յունաստան եկած էին Կ. Պոլսէն ու իրարբերդէն, եւ սակայն հապճեպ կարգադրութեամբ որոշուած էր ցրուել տղաքը, եւ 14 տարեկանէն վեր աղջիկները որբ չհամարելով գանոնք որոշ աշխատանքի կամ ծառայութեան ղրկել:

30 Հայ դպրոցներ, 35 Պարբերականներ, 5 Համայնքներ

Բարեբախտաբար շնորհիւ Առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոսի անմիջական ջանքերուն, որբերու խնամակալութեան կարելոր հարցը իր ընթացքը փոխեց, եւ իսկոյն 1920-ական թուականներուն Յունաստանի մէջ հիմնուեցան 30 հայ դպրոցներ՝ հին վարժարաններու կողքին, եւ որբեր ազատ մնացին օտարամուտ ազդեցութիւններէ: Կազմակերպուեցան բարեգործական, հայրենակցական, երիտասարդական եւ մարզական միութիւններ: 1924-էն ետք շուրջ 35 պարբերականներ սկսան հրատարակուիլ Յունահայ համայնքէն ներս, ու հաստատուեցան հայկական հինգ նոր համայնքներ՝ Գանտիայի, Միտիլիի, Գալամաթայի, Վոլոյի եւ Լարիսայի շրջաններուն համար: Յունահայ թեմը աւելի կազմակերպուեցաւ անխոնջ ջանքերով Առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոսի: Նոր եկեղեցիներ կառուցուեցան Աթէնքի, Բիրէի, Բանկրաթի, Սելանիկի, Բերիսթերէի, եւ Գոգիւնիայի մէջ: Մշակութային եւ մարզական կեանքը ծաղկեցաւ հայ երաժիշտներով, մարմնակրթական միութիւններով, թատերական արուեստով, եւ բարեսիրական կազմակերպութիւններով: Հայ Կաթողիկէ եւ Բողոքական համայնքները եւս ծաղկեցան իրենց հոգեւոր մշակներով: Կարապետ Արքեպիսկոպոս իր պաշտօնին վրայ մնաց ցկեանս եւ վախճանեցաւ 1951 թուականին: Հայրապետական որոշումով Եգիպտոսի թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեան յաջորդող հինգ տարիներուն վարեց նաեւ այցելու Առաջնորդի պարտականութիւնները տարեկան այցելութիւններով եւ քահանաներու ձեռնադրութիւններ կատարելով:

էր տակաւին: Երբ 1945 թուին տեղի կ'ունենար Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Զ Չորեքճեան Կաթողիկոսի ընտրութիւնն ու օծումը, Մայր Աթոռ ժամանած էին երկուքը՝ Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեան եւ Վազգէն Վարդապետ Պալճեան: Նորընտիր Հայրապետը կուտար իր պաշտօնական վաւերացումը Ռուսմանիոյ թեմի առաջնորդական տեղապահ Վազգէն Վարդապետին: Նոյն Հայրապետէն Վազգէն վարդապետ Պալճեան կը ստանար ծայրագոյն վարդապետի եւ ապա եպիսկոպոսի բարձր աստիճանները:

Յունահայ թեմի Կերօն Շրջանը Ներկայ Կացութիւնը


Յունահայ Թեմի Կերօն Շրջանը Ներկայ Կացութիւնը

1951 թուի Առաջնորդի վախճանումով ներքին պայմաններ յետաձգեցին Կարապետ Արքեպիսկոպոսի Յունահայ թեմի յաջորդին ընտրութիւնը: Կիլիկիոյ 1956 թուի Կաթողիկոսական ընտրութեան հետ կապուած անհիմն պատճառներով մի քանի թեմեր բաժնուեցան Մայր Աթոռէն, որոնցմէ մին եղաւ Յունահայ թեմը, հակառակ անոր որ Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը Հայրապետական Պատուիրակ մը նշանակած էր արդէն եւ ուղարկած Աթէնք: Քաղաքական նոյնքան անհիմն պատրուակներով Պատուիրակը չէր կրցած մնալ իր պաշտօնին վրայ, եւ 1958-ին, հակառակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խնամքին եւ հոգածութեան, Յունահայ թեմը կը կիսուէր եւ մասամբ Կիլիկիոյ Աթոռին կ'ենթարկուէր: Առ այժմ էջմիածնական եւ Կիլիկեան թեմեր անկախաբար իրենց վարչականներով կը զբաղեցնեն Յունահայ գաղութը: Իրողութիւնն այն է որ միայն Հայ Եկեղեցին պիտի շահէր եթէ թեմական կարգադրութիւնները կատարուէին Մայր Աթոռի գիտութեամբ եւ առանց կանոնական անջատումի, եւ սակայն այդ կը պահանջէր պատուաբեր կամք եւ արի կեցուածք:

Վազգէն Վարդապետ Պալճեանի Բացառիկ Ձեռնադրութիւնը

Յունաստանի իր առաջնորդութեան շրջանին, 1943 թուին, Կարապետ Արքեպիսկոպոս վարդապետ ձեռնադրած է Ռուսմանիոյ թեմէն ընծայացու Լեւոն Կարապետ Պալճեան ուսուցիչը զոր վերակոչած է Վազգէն վարդապետ, որ կարճատեւ մը ետք պիտի դառնար Վազգէն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց (1955-1994): Երկրորդ Պատերազմի դառն օրերուն Ռուսմանիոյ մերձաւորագոյն հայ եպիսկոպոսն էր Յունաստանի Առաջնորդը որուն միայն կրնային դիմել ձեռնադրութեան համար, երբ Մայր Աթոռը թափուր

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐ ՈՒՐԲԱԹ 4 ՄԱՐՏ, 2022



facebook HOLY CROSS CATHEDRAL (Montebello)
WOMAN'S WORLD DAY OF PRAYER (Southern California)

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00 – ԷՆ 12:00

Հարստային Գալիֆորնիոյ Բոլոր Հայկական Եկեղեցիները հրաւիրուած են մաս կազմելու Կանանց Համաշխարհային Աղօթքի Օրուան
հիւրընկալուած
Սուրբ Խաչ Հայ Առաքելական Մայր Տաճարին կողմէ
900 W. LINCOLN AVENUE, MONTEBELLO, CALIFORNIA, 90640
Տեղերը սահմանափակ են

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Թաղէոս Եսայեանի «Սիրտը»...

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

«Կ'ուզեմ տաքուկ-տաքուկ պահել սիրտը իմ»

Թաղէոս Եսայեանը չեմ ճանչցած անձնապէս: Հանդիպած եմ իրեն առցանց՝ Շաքէ Մանկասարեանի ղեկավարած ռատիօ Այգ կայանին եւ անոր դիմատետրի միջոցաւ:

Վերջերս ստացայ իր նոր հրատարակած քերթուածներու հատորը, «Պարզ ու Տաքուկ Բառերով»՝ թիւով վեցերորդը իր հրատարակած գիրքերուն: Գիրքը հրատարակուած է



Երեւան, 2021 ին: Գիրքին մէջ տեղ գտած է նաեւ Շաքէ Մանկասարեանի խօսքը եւ Եգնիկ Բալայեանի ողջոյնի գիրքը:

Այս քերթուած-բանաստեղծութիւններու հատորը կարգալէ ետք է, որ կրցայ ճանչնալ Թաղէոս Եսայեանը, որուն անձնապէս առիթը չէի ունեցած հանդիպելու: Ծանչցայ գի'նք, որովհետեւ տեսայ ու հասկցայ իր «սիրտը»: Այն սիրտը, որ Թաղէոս Եսայեան յաճախ ներբողած է իր քերթուածներուն մէջ՝ որպէս «հայու սիրտ»: Եւ որ երեւի միշտ ալ ուզած է «տաքուկ-տաքուկ պահել» գայն՝ որպէսզի ընթերցողները, զինք ճանչցող թէ այլ, տեսնեն եւ գիտնան թէ «ի՞նչ կայ ճոն»:

Ես տեսայ ու ճանչցայ Թաղէոս Եսայեանը, երբ կարդացի այս գիրքը: Բայց մանաւանդ, երբ իր քերթուածներուն մէջէն կրցայ ըմբռնել իր սիրտը, որ անդադար կը տրոփէ:

Թաղէոս Եսայեանի սրտին մէջ ամբարուած է «մանկութեան օրեր», որպէսզի «միշտ մանուկ դառնայ»: Մանուկը ուրիշ բան չէ եթէ ոչ անմեղը, որ կը նայի կեանքին բարի եւ կը տեսնէ գեղեցիկը եւ լաւը: «Եկէ՛ք լաւին՝ լաւ ըսենք»: Ու տակաւին, «եկէ՛ք ճիշդին՝ ճիշդ ըսենք»: Եւ այս լաւին ու ճիշդին մէջէն Թաղէոս Եսայեան կը քալէ «արդարութեան» հետ, որպէսզի «նոր կեանք» տայ բոլորին:

Թաղէոս Եսայեանի սրտին մէջ տեղ գտած է բնութիւնը իր ամբողջութեանը մէջէն: Եթէ սիրած է «ծաղիկները»՝ բայց գայն վերածած է իր «ծաղիկներու օրուանը»: Բնութեան մէջէն ան չի մոռնար եղանակը ուր «գարունը» կը վաչելէ եւ որ իր «սիրտը կը բանայ»: Եւ այս նկարագրած բնութեան մէջէն Թաղէոս Եսայեան կը տեսնէ իր կեանքի մէջ այլ գեղեցիկութիւնը: Այս գեղեցիկութիւնը, որ իր սրտին մէջ կուտակած է «գանձ» մը, որ «ամէնաթանկ է»: Եւ այս «գանձը» ան կ'որակէ... «մայրը»:

Թաղէոս Եսայեան կ'երգէ սէրը: Իր սիրտը կը տրոփէ իր կեանքի մէջ հանդիպած թէ այլ «աղջիկները»: Ան կը ցանկայ, որ «սիրածներէն մին, սրտին մէջ ըներ իջեան»: Բայց Թաղէոս Եսայեանի գիտէ թէ «հայուհին» տարբեր է: «Հագարի մէջ փնտռուած տարբեր ծաղիկ մըն է» հայուհին եւ որ կը կոչէ զինք «հրաշք աղջիկ»:

Եւ արժէ ակելով պեղել Թաղէոսի սիրտը: Ան կը խնդրէ Աստուծոյ, որ մարդոց սրտերուն մէջէն «հայեցնէ սառը» որպէսզի «չմեղանչեն իր դէմ»: Ու տակաւին ան իր սրտին մէջէն կը դիտէ «մերօրեան աշխարհը»: Այն աշխարհը, որ Թաղէոս Եսայեան կը փափաքէր, որ հոն ժայթքէր իր սրտին պատկերը՝ «սէրը»՝ եւ որ

դժբախտաբար մարդկութիւնը չի կրցաւ գտնել գայն:

Թաղէոս Եսայեանի սիրտը հայուն համար է եւ հայկական է: Ան կը խօսի իր թոռնիկին հետ ու կ'ընէ իր մաղթանքը: «Երբ մեծանաս մարդ ըլլաս, Այբ, Բեն, Գիմ-դ չմոռնաս»: Թաղէոս Եսայեան իր հայու սրտին մէջէն կը տեսնէ «հայ սիրտը ժայռերուն մէջ ծովափի»: Եւ որ այս հայու սիրտը «վիթխարի» է, ուր ոչ մէկը կրնայ խորտակել անոր՝ իմ մահ հայուն «կեանքը» եւ անոր «կամքը»:

Թաղէոս Եսայեանի սիրտը կ'ապրի «Տէր Զօրը»: Ան մինչեւ այսօր կը զգայ անոր «տաքութիւնը»: «Տաք են, դեռ տաք ոսկորներ հոն փռուած»: Թաղէոս գիտէ հողին արժէքը, «սուրբ է հողը մեզի համար»: Այս իմաստով կը տեսնենք թէ ինչքան Արցախեան վերջին պատերազմը իր սրտին մէջ ճնշած է...: Ան աղօթք կը բարձրացնէ Աստուծոյ որպէսզի «հայրենի կակաչները դափնեպսակ ըլլային Արցախի զոհուածներուն»: Արցախի պատերազմէն ետք ան չի պահեր իր տխրութիւնը: «Սիրտս ծով է ցաւերու»: Այդ ցաւերուն մէջէն կ'ուզէ դարձեալ «տեսնել իմ Շուշին արեգակը ճակատին»:

Թաղէոս Եսայեան Արցախի պատերազմի պատճառած տխրութիւնը եւ ցաւը գիտէ վերածել յոյսի...:

«Բայց լսեցէք դուք երդումը ողջերուն

Պիտի անպայման ետ տուն բերեն արեւից, Եռագոյնով պիտի բարձրանան սարերուն

Ու խոստացուած ծաղիկներով գան մայրերուն...»

Թաղէոս Եսայեան գիտէ ու յատակ կը տեսնէ թէ կեանքը վաղանցիկ է: Եւ թէ մարդուն օրերը կ'անցնին շատ արագ: Ան գիտէ թէ «սեւ մագի օրերուն» շուտով պիտի հասնի «ճերմակ մագերու օրերը»: Այս սեւ մագերէն մինչեւ ճերմակ մագերու առանցքին՝ մէկ բան մը կայ, որ կը մնայ սրտին մէջ: Թաղէոս Եսայեանի համար այդ «սիրտը յուշն» է:

Թաղէոս Եսայեանի սրտին մէջի այս «սիրտը յուշը» այսօր տակաւին կը մնայ ամուր: Այս «սիրտը յուշը» իր կեանքի մղիչ շարժակն է: Ան կը յիշէ ու կ'ապրի այս սիրտը յուշերը եւ առանց յուսահատելու «դեռ կը քալէ»: Ան կը քալէ «հպարտ, որպէս տէր»: Բայց ան քալած ժամանակ նոյնքան նաեւ կը գործէ: Կը գործէ որպէսզի այն «ինչ որ կանչէ առակեանքէն՝ ոսկիացած ետ տայ»: Եւ անպայմանօրէն, Թաղէոս իր սիրտը ու անոր մէջի սիրտը յուշերը կը միացնէ «մարդկութեան սրտին

Մանուկներու Բացատրական Աստուածաշունչի Ներկայացում Եւ Գինձօճ Բուէյթի Մէջ



Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուկեանի հովանաւորութեամբ՝ Զորեքչաբթի, 22 Փետրուար, 2022 ին երեկոյեան ժամը 8:30 ին, Սբ. Վարդանանց Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան հրատարակած «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ» ի հայերէն տպագրութեան գինձօճը: Ներկայ էին՝ Սբ. Վարդանանց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Աստուածաշունչի Ընկերութեան Ծոցի Խնամակալ Մարմինի ատենապետ Արթ. Տ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեանը, Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան ընդհանուր քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէճեանը, «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ» ի հայերէն տպագրութեան պատասխանատու Դոկտ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեանը, որ ողջունելով ներկաները, անդրադարձաւ Աստուածաշունչի կենսական կարեւորութեան եւ այդ ծիրէն ներս Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան տարած աշխատանքներուն: Ան դիտել տուաւ, որ 1600 տարուան ընթացքին թէեւ եղած են շատ մը փոփոխութիւններ, սակայն Աստուածաշունչը չէ կորսնցուցած իր կարեւորութիւնը: Ան ուրախութեամբ յայտնեց նաեւ, որ Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնը գիտութեան սրբունթաց գարգացումի այս դարուն կը պահէ իր այժմէականութիւնը եւ նորովի կը մատուցուի:

Ապա խօսքը տրուեցաւ Քուէյթի Ազգային Վարժարանի հայրենաւանդ ուսուցիչ Պրն. Ճորճ Արա-
հատի Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուկեանի մեծապէս գնահատեց ինչպէս «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ» ին ներկայացումը, նոյնպէս ալ անոր հայերէն հրատարակութիւնը, որ կատարուած է Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան կողմէ Դոկտ. Հրայր Ճէպէճեանի եւ անոր տիկնոջ՝ Դոկտ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեանի աշխատանքով:
Աւարտին տեղի ունեցաւ աւանդական գինձօճի արարողութիւն, գիրքերու մակագրութիւն եւ փոքրիկ հիւրասիրութիւն:
Ներկայ մը

պաթեանին, որ համապարփակ տեղեկութիւն տուաւ «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ» ին մասին: Ան ըսաւ. «Քրիստոնէութիւնը միայն կրօնք չէ, այլ՝ կենսակերպ, իսկ Աստուածաշունչը՝ կեանքի ուղեցոյց: Այս իմաստով հոյակապ գիրք է «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ»-ը, ուր մանկավարժական հիմունքներով ներկայացուած են Աստուածաշունչի դէպքերը եւ զանազան հարցումներով ու առաջադրանքներով՝ գանտնք կապած մեր կեանքին»: Ան դիտել տուաւ, թէ գիրքը մատչելի դարձնելու նպատակով՝ պատմութիւնները շարադրուած են մանուկներուն համար դիւրամբօրնելի հայերէնով մը:

Այնուհետեւ խօսք առաւ Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան ընդհանուր քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէճեան, որ անդրադարձաւ Սուրբ Գիրքի հայերէն թարգմանութեանց, հպարտօրէն նշելով, որ միայն հայերս գայն «Աստուածաշունչ» կոչած ենք: Ան ըսաւ նաեւ, որ անկարելի է հայուն ազգային ինքնութիւնն ու կրօնքը բաժնել իրարմէ:

Հուսկ, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուկեանի մեծապէս գնահատեց ինչպէս «Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ» ին ներկայացումը, նոյնպէս ալ անոր հայերէն հրատարակութիւնը, որ կատարուած է Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան կողմէ Դոկտ. Հրայր Ճէպէճեանի եւ անոր տիկնոջ՝ Դոկտ. Արտակ Ա. Քհնյ. Քէհեանի աշխատանքով:

Աւարտին տեղի ունեցաւ աւանդական գինձօճի արարողութիւն, գիրքերու մակագրութիւն եւ փոքրիկ հիւրասիրութիւն:
Ներկայ մը

հետ՝ եւ որ չզժտուի ոչ մէկի հետ եւ քէն չերթայ աշխարհէն»:

Թաղէոս Եսայեանի լեզուն պարզ է, յստակ, գեղեցիկ հայերէն եւ հարորդական: Վերջապէս՝ ան կը խօսի իր սրտէն եւ այս իմաստով իր բանաստեղծութիւններուն մէջէն կրցած է հասնիլ ընթերցողին սրտին: Եւ այն որ սրտէն կուգայ... կ'ապրի... կը շարունակուի:

Թաղէոս Եսայեանի սիրտը: Այն սիրտը որուն մէջէն ճանչցայ Թաղէոս Եսայեանը: Թաղէոս Եսայեանը, որ գիտէ սիրել: Սիրել Աստուած, բնութիւնը, ընտանիքը, հայր, հայրենիքը, մարդկութիւնը ու տակաւին:

Եւ այս սիրտն է որ մարդը կրնէ մարդկային: Մարդկայինը, որ գիտէ ապրիլ Աստուծոյ, Անոր ստեղծագործութեանը, հայուն եւ մարդկութեանը համար:

Թաղէոս Եսայեանի սիրտը: Այն սիրտը, որ Թաղէոսը ըրած է մարդկային: Ան այսօր այս մարդկային սրտով է, որ տակաւին կը քալէ եւ պիտի մաղթենք, որ ան տակաւին շատ երկար «քալէ»: Թեկուզ «ճերմակ մագերով»...:

Ես ճանչցայ Թաղէոս Եսայեանը քանի ճանչցայ անոր «սիրտը»: Եւ «Պարզ ու Տաքուկ Բառերով» իր գիրքը՝ դուրս հանեց Թաղէոս Եսայեանի այս «սիրտը»:

ՄԱՐԱԶԴ



ՎԱՐԴԱՆ ԵԱՂՍԸԶԵԱՆ

(18 Յունիս 1938, Հալէպ -1 Փետրուար 2022, Լոս Անճելըս)

Սրտի դառն կակիծով կը գոժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՎԱՐԴԱՆ ԵԱՂՍԸԶԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 1 Փետրուար 2022-ին, Լոս Անճելըս, Քալիֆորնիա:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 17 Մարտ 2022-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Ֆորեսթ Լոն գերեզմանատան Old North Church եկեղեցւոյ մէջ, որմէ ետք թաղման կարգը պիտի կատարուի նոյն գերեզմանատան մէջ, Հոլիվուտ Հիլզ (Forest Lawn Memorial Park - Hollywood Hills, 6300 Forest Lawn Dr, Los Angeles, CA 90068):

- Սգակիրներ՝
- Տիկինը՝ Քաթրին Եղազեան
- Դուստրերը՝
- Գալին եւ Արա Գանպէրեան
- Վանիա եւ Մայք Շանլի
- Թոռնիկները՝

Գօլէթ Գանպէրեան, Մամթօ Գանպէրեան, Քեւրն Շանլի եւ Օուրն Շանլի

Քոյրը՝ Վարդուկ Մարտիրեան եւ համայն Եղազեան, Գանպէրեան, Շանլի, Համալեան, Մարտիրեան, Պոլաճեան, Նորաշխարհեան, Ճէպէճեան, Ներսոյեան եւ Վարդերեսեան ընտանիքներ ու հարազատներ:

Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի կրթաթոշակներու ֆոնտին:

Առաջ՝ Դէպի Զերթական Փոցիւր

Շարունակուած էջ 2-էն

դիվիզիա ուղարկի, որպէսզի համատեղ ուժերով ջախջախենք Ատրպէյճանին (Ուքրանիային նաւթով օգնելու համար), իսկ եթէ շատ խնդրենք՝ կարելի է կարսն ու Սուրմալուն էլ հետ բերել Բոսֆորի նեղուցը դաւաճանաբար փակած Թուրքիայից:

Ռուսներն, ի դէպ, դէմ չեն լինի մեզ հերթական անգամ որպէս «ֆորպոստ» օգտագործելուն: Արեւ-

մուտքը նոյնպէս դէմ չի լինի «կովկասեան ճակատ» բացելուն՝ հետագայում Հիւսիսային Կովկասով Ռուսաստանին հարաւից հարուածելու հեռանկարով: Բայց որ «առաջարկը» Հայաստանից է հնչում՝ սա առնուազն տարօրինակ է: Քանի՞ անգամ պէտք է տրորել նոյն փոցիւր՝ վերջապէս հասկանալու համար, որ արկածախնդրութեան մերժումն իսկապէս մեր միակ դաշնակիցն է:

«ԶՈՐՐՈՐԴ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

Հայ Քոյրերու Վարժարան

Շարունակուած էջ 11-էն

եան իր խօսքին մէջ ուրախութիւն յայտնեց, որ աշակերտները խանդավառութեամբ ներկայացուցին սոյն հանդիսութիւնը: «Վասն կրօնի եւ հայրենեաց բնաբանով ճակատամարտ մղած Վարդան Մամիկոնեանը եւ իր ընկերները նահատակուեցան մեզ՝ ապագայ սերունդները փրկելու համար, եւ իրենց նահատակութիւնը ի գուր չզնայց քանի որ հայը մինչեւ այսօր ներկայ է իր հաւատքով, իր եկեղեցիով եւ դպրոցով, եւ փաստը այսօր մեր ներկայութիւնն է այստեղ», ըսաւ մեծաւորուհի Քոյրը:

Աւարտին, Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Հայ կաթողիկէ թեմի Առաջնորդ Գերապայ-

ծառ Հայր Միքայէլ Եպս. Մուրառեան մէջբերեց բանաստեղծ Վահան Թէքէեանը խօսքերը, որ Վարդան Մամիկոնեանի մասին գրելով՝ կ'ըսէ. «Դարերը կ'անցնին, բայց Վարդանը քաջ, բայց Վարդանը սուրբ, կ'երթայ միշտ յառաջ»: Ան ըսաւ, որ աշակերտները զեղեցիկ արտասանութիւններով, երգերով ու պարերով արտայայտեցին Թէքէեանի այս խօսքերը, քանի որ Մամիկոնեանը չմնաց 451 թուականին մէջ, այլ դարեր շարունակ ամէն մէկ հայու սրտին մէջ կ'ապրի Մամիկոնեանը: Գերապայծառ Հայրը շնորհակարար զպրոցին տնօրէնութիւնը, ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը պատրաստած յայտագրին համար, այնուհետեւ «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը:

Թախծով Պարուրուած Զյազեցած Կարօս

Շարունակուած էջ 12-էն

(պահոց): Գրողի մահից յետոյ Սեդա Անանեանը մամուլում հանդէս է եկել Ջարեանի գործունէութեանը վերաբերող երկու ծաւալուն նիւթերով:

Այժմ թուարկման կարգով կը նշեմ այն անմոռաց անուններից ոմանց, որոնք տեղ են գտել Սեդա Անանեանի վերջերս հրատարակուած նոյնանուն գրքում:

Պերճ Թիւրապեան, Նիւեորքաբնակ երգիչերգահան, որը հայերէնի է թարգմանել Շառլ Ազնաւուրի 13 երգ:

«Կոմիտաս Վարդապետի կեանքի վերջալոյսը», հիւսնալի իրական պատմութիւն՝ Կոմիտասի ամիւնը 1936ին Փարիզից Երեւան տեղափոխելու վերաբերեալ:

«Թանգարանի գինուորը», արուեստաբան, փորձագէտ Շահէն Խաչատրեան, որը Սարեանի թանգարանը համալրել է 76, իսկ Պատկերասրահին 400 նկարներով:

«Իմացութիւն եւ նուիրում», Սէյրանուհի Գեղամեան (բազմավաստակ լրագրող, մշակութաբան), «Հեռացող լիշտակներ» ժողովածուի հեղինակ: Գրքում տեղ են գտել ինչպէս հայերէնի, այնպէս էլ սփիւռքահայ արուեստագէտներ, երաժիշտկատարողներ, մտաւորականներ եւն: Սէյրանուհի Գեղամեանը խորը իմացութիւն է հանդէս բերել «Մատենադարան» փաստագրական ժապաւէնի առաջին չորս մասերի գրական նիւթը ներկայացնելիս:

«Երախտաւոր թարգմանիչը» (Փիէր Տէր Մարգրիսեան), Հայ դասական գրողներին ֆրանսացիներին եւ ֆրանսահայերին ծանօթացնելու, ներկայացնելու առաքելութեամբ, թարգմանել է Ջարենցի, Մահարիի, Զապել Եսայեանի, Կոստան Ջարեանի եւ այլոց գրականութիւնը:

Նաւապետ Երուանդ Գասպար-

եան, 20րդ դարի առաջին քառորդին Սեւանա լճի նաւապետ, որը յայտնի է իր հերոսական գործերով: Երուանդը Կոստան Ջարեանի «Նաւը լեռան վրայ» վէպի գլխաւոր հերոս Արա Հէրեանի նախատիպն է:

Ֆրէդերիկ Ֆէյտի, նշանաւոր լեզուաբան, հայագէտ, որն իր կեանքի 50 տարին նուիրել է Հայագիտութեանը: Մեծ արժէք է ներկայացնում «Քրիստոնէական Հայաստանի հմայիլները» (Հմայիլ, քրիստոնէական հաւատքի չարը խափանող առարկայ՝ ասեղ, գամ, տան մուտքի դրան վերելում ամրացուած պայտ եւն.) աշխատութիւնը, որը, կարծում եմ միակն է իր տեսակի մէջ մեր պատմագրութեան ասպարէզում:

Հանճարեղ ճարտարապետ Ալէքսանդր Թամանեան: Ռուսաստանի զոյգ մայրաքաղաքներում եւ Երեւանում նախագծած բազմաթիւ շինուիւնների հեղինակ, որի Երեւանի 15 տարի գոյութիւն ունեցած Տունթանգարանն այսօր անբացատրելի որոշումով գոյութիւն չունի:

Հենրիկ Բախչինեան, Ջարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի երկարամեայ տնօրէն, շնորհառատ գրականագէտ, բանաստեղծ, թարգմանիչ: Էմանուէլ Շամշեան, Իտալիայում ուսանած նշանաւոր բժշկապետ: Պոլսի հայերին պատկանող Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցի հիմնադիր:

Սեդա Անանեանի «Անմոռաց անուններ» գիրքը նորովի մի հանրագիտարան է, հանրագիտակ՝ գրուած պարզ, իւրաքանչիւր ընթերցողի համար ըմբռնելի, առանց բարդ բառերի խճողմամբ: Ուսանելի, յայտնագործումներով լի բազմաթիւ էջեր ու նիւթեր կը հարստացնեն ամէն մի ընթերցողի գիտելիքների պաշարը: Վստահութեամբ կարող եմ վկայել, որ այն շատերի համար կը դառնայ սեղանի գիրք:

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more...

Please reach out for quotes
 Website: norayr.daduryan.com
 Email: norayrdaduryan@gmail.com

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՍԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

«Լիվերփուլ» Նուաճեց Անգլիական Լիկայի Գալաթը



Լոնտոնի «Ուեմպլի» մարզադաշտին վրայ տեղի ունեցած հանդիպման ընթացքին «Լիվերփուլ» պարտութեան մատնելով «Չելսիին» տիրացաւ Անգլիական Լիկայի բաժակին: Խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակն աւարտեցաւ ոչ ոքի, սակայն «Լիվերփուլ» առաւելութեան հասաւ 11 մեթրանոցնոց փենալթիի հարուածներով՝ 11:10:
«Լիվերփուլ» այս գալաթը նուաճեց 9-րդ անգամ:

«Պարսելոնա» Եւ «Ռեալ Մատրիտ» Յաղթական

Սպանիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին «Պարսելոնան» ընդունեց Պիլպոյի «Աթլետիքոյին»: Զաւրի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:
Մատրիտի «Ռեալը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Ռայօ Վալյեկանոյի» հետ:
83-րդ վայրկեանին աչքի ինկաւ Ֆրանսայի հաւաքականի յարձակող Քարիմ Պենգեման:



Արքայական խումբը 60 կէտով առաջատարն է: Երկրորդ տեղը ընթացող «Սելտիան» 25 խաղէն յետոյ ունի 51 կէտ:
«Պարսելոնան» 25 խաղէն յետոյ 45 կէտով չորրորդն է եւ 1 կէտ ետ է 26 հանդիպում ունեցած եւ երրորդ տեղը գտնուող «Պետրսին»:

«Նափոլին» Յաղթեց «Լացիոյին» Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Իտալիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին «Նափոլին» Հռոմի մէջ մրցեցաւ «Լացիոյի» հետ եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով:
«Նափոլին» յաղթական կողմ աւելացուած ժամանակին նշանակեց սպանացի կիսապաշտպան Ֆալիան Ռուիսը:
27 խաղէն յետոյ «Նափոլին» 57 կէտով բարձրացաւ առաջին տեղ: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղը նահանջած «Միլանը»: Ախոյեան «Ինթերը» 26 խաղէն յետոյ ունի 55 կէտ եւ երրորդն է:

«Ռոման» Յաղթեց «Սպեցիային»

Իտալիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին «Ռոման» հիւրընկալեց «Սպեցիային» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:
Աւելացուած ժամանակի վերջին վայրկեանին 11 մեթրանոցը արդիւնաւէտ կատարեց անգլիացի յարձակող Թեմի Աբրահամը:
Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ փոխարինուեցաւ աւելացուած ժամանակին:
«Ռոման» 44 կէտով 8-րդն է: «Սպեցիան» 16-րդն է՝ 26 միաւոր:

«Մանչեսթըր Սիթին» Ուժեղ Էր «Էվերթոնին»

Անգլիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին «Մանչեսթըր Սիթին» Լիվերփուլ քաղաքին մէջ մրցեցաւ տեղուց «Էվերթոնի» հետ: Եւ յաղթանակ արձանագրեց նուազագոյն հաշուով:
Վերջին վայրկեաններուն յաղթական կողմ հեղինակ դարձաւ անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոտսն:
«Մանչեսթըր Սիթին» 66 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 6 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Լիվերփուլէն», որ 1 խաղ նուազ ունի:

«Պայրըն» Պարտութեան Մատնեց «Այնթրախտին»

Գերմանիոյ առաջնութեան 24-րդ հանգրուանին ախոյեան եւ առաջատար Միւնխի «Պայրընը» Ֆրանքֆուրթի մէջ խաղցաւ

Արթուր Դաւթեանը՝ Ոսկէ Մետալակիր



Գերմանիոյ Կոտպուս քաղաքին մէջ սպորտային մարմնամարզութեան աշխարհի գալաթի մրցումներուն Հայաստանի հաւաքականի առաջատար, Թոքիոյ Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր Արթուր Դաւթեանը հենացատկի վարժութեան եզրափակիչին գրաւեց առաջին տեղը:
Եւրոպայի ախոյեանը վաստակեցաւ 14.983 միաւոր:
Աւելի վաղ Հայաստանի հաւաքականէն մետալակիր դարձած էր Եւրոպայի փոխախոյեան Վահագն Դաւթեանը: Օղակներու վարժութեան Դաւթեանը 14.600 միաւորով երկրորդն էր:

ՖԻՖԱ-Ը Եւ ՌԻԵՖԱՆ Պատժամիջոցներ Կիրառեցին Ռուսաստանի Հաւաքականի Նկատմամբ

Ֆուտպոլի Ռուսաստանի հաւաքականը այսուհետեւ պիտի չկրնայ մասնակցիլ Քաթարի մէջ տեղի ունենալիք Աշխարհի Բաժակի մրցումներուն:
ՖԻՖԱ-ն դատապարտեց Ռուսաստանի զինուած ուժերու ներխուժումը Ուքրանիա եւ այս պատճառով կիրառեց պատժամիջոցներ Ռուսաստանի հաւաքականի նկատմամբ:
Լեհաստանի հաւաքականը արդէն իսկ հրաժարուած էր խաղալ Ռուսաստանի դէմ ընտրական փուլի փլէյ-օֆֆի կիսաեզրափակիչին: Չեխիան եւ Շուեդը նոյնպէս յայտարարած էին, որ չեն մասնակցիլ Ռուսաստանի հետ հնարաւոր հանդիպումներուն:
Ռուսաստանի Սանկտ Պիթերբուրգ քաղաքը գրկուեցաւ ֆուտպոլի եւրոպական Ախոյեաններու Լիկայի եզրափակիչին:
ՌԻԵՖԱ-ն, նկատի առնելով ռուսական զինուած ուժերու ներխուժումը Ուքրանիա, որոշեց եւրոպական ժամանակի մրցաշարի եզրափակիչը փոխադրել Փարիզի:

Արամովիչը «Չելսիի» Ղեկավարունը Փոխանցած Է Ակունքի Բարեգործական Հիմնադրամին

Ախոյեաններու Լիկայի գալաթակիր Լոնտոնի «Չելսիի» ռուս սեփականատէր Ռոման Աբրամովիչը ակումբի ղեկավարումը փոխանցած է ակումբի բարեգործական հիմնադրամին: Ուքրանիոյ մէջ ՌԴ զինուած ուժերու ռազմական գործողութիւններու պատճառով Մեծն Բրիտանիոյ հանրային ճնշում կը գործադրէր «Չելսիի» վրայ:
«Գրեթէ 20 տարի «Չելսիի» մէջ իմ դերը միշտ դիտարկած եմ որոշակի պահանջներ տեսանկիւնէն: Որոշումներ ընդունելով միշտ առաջնորդուած եմ ակումբի շահերով: Կը շարունակեմ հաւատարիմ մնալ այդ արժէքներուն: Այդ պատճառով այսօր ակումբի ղեկավարումը կը յանձնեմ «Չելսիի» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուներուն», - կը նշուի «Չելսիի» յայտարարութեան մէջ:
Բրիտանական մամուլը կը գրէ, որ մի քանի մասնաւոր ներդրումային ընկերութիւններ կը կը փափաքին գնել «Չելսիին», որու արժէքը կը գնահատի 2 միլիարդ տոլար:

ՊՍԺ-ի Յաղթեց Սփապէի Երկու Կոլերուն Ծնորիւ

Ֆրանսայի առաջնութեան 26-րդ հանգրուանին ՊՍԺ-ն ընդունեց «Սենթ Էթյենին» եւ յաղթանակ տարաւ 3:1 արդիւնքով:
Երկու կոլերու հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն: Ան ՊՍԺ-ին կազմէն ներս նշանակած 156 կոլով հաւասարեցաւ խումբի նախկին խաղացող, շուեդացի յարձակող Ջլատան Իբրահիմովիչին:
ՊՍԺ-ն 62 կէտով առաջատարն է: Երկրորդ եւ երրորդ տեղերը գտնուող «Նիցան» ու «Մարսելը» ունին 46-ական կէտ:

«Այնտրախտի» հետ եւ յաղթեց 1:0 արդիւնքով:
Միակ կոլը նշանակեց Գերմանիոյ հաւաքականի յարձակող Լեռոյ Սանեն:
«Պայրըն» 58 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտի առաւելութիւն ունի երկրորդ տեղը ընթացող Տորթմունթի «Պորուսիայի» նկատմամբ: «Այնտրախտը» 10-րդն է՝ 31 միաւոր: